

72 63

ՕՐԱԿՈՒԹԻՒՔ

ԽԵԶԱՆՈՒՄ ՄՍՈՒՄՆԱՍԻՐԱՅ ԸՆԿԵՐ.

ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԸՆԹԱՑՔ



# ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԵԱՆ

## ԴԱՍԵՐ

ՊՐԱՋԻՆ ՏԱՐԻ



Կ. ՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՄԱՐԳԱՐԵԱՆ

( 1883 )

91(075)

U-81

Ирина-Мария 6.6

91/075

Ա-81

ՀՐԱՄԱ. ԽՈՒԹԻՒՆ. ԵՎԱԿԱՆ

ԽԻԶԱՆՈՒ ՈՒՍՈՒՄՆԱՄԻՐԱԾ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Ն. Ա. Խ. Պ. Ա. ՏՐԱ. Ա. Ա. Կ. Ա. Ն. Ը. Ն. Թ. Ա. Յ. Բ.

# ԱՃԻՄՔՀԱԳՐՈՒԹԵԱՆ

Դ. Ա. Ա. Ե. Ր.

Ա. Ո. Ա. Զ. Ի. Տ. Ա. Ր. Ի.

Կ. Ա. Ա.



Կ. Պ. Լ. Խ. Ա.

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ. ՄԱՐԳԱՐԵԱՆ

1883

ՆԱԽԱՊԱՏՐՄԱՅԻՆ ԲՆԹԱՅՔ

# ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԵԱՆ

ԴԱՍԵՐ

Ա. ՏԱՐԻ

1. ՀՈՐԻԶՈՆ ՈՒ ԿՈՂՄԵՐԸ

69432 - Ա. Դ.

Երբ դանուինք ընդարձակ դաշտավայրի  
մը վրայ, ուր ոչ մի առարկայ մեր տեսու-  
թիւնը չարգիլեր, երկրագնդիս մի փոքր մասը  
միայն կը նկատենք: Այ տեսնենք որ այն կէ-  
տին վրայ ուրկէ անդին մեր տեսութիւնը  
կ'արգիլուի, երկինքը կամարածև կը յարի  
երկրիս հետ: Դիձն, ուր երկինքն ու երկիրը  
կը միանան, շրջանակի ձևն ունի: Շրջանակն  
ուր երկինքն երկրիս հետ կը միանայ և ուր-  
կէ անդին ոչինչ չենք տեսներ, կ'անուանի  
Հունան, այսինքն Սահման եւ ռեպուբլիկա: Հողի-  
զոնին այն կողմն ուստի կը ծաղի արեր, կը  
կոչուի Սրեկը: Սրեկը հակառակ կողմն,  
ուր արեր կ'աներեւութանայ մեղմէ, է Սրե-  
մուտք: Այս օրին արեր կը դանուի Հարա-

2004



2086-87

ւային կողմը : Հարաւին հակառակ կողմն է Հիւսիսը : Արեգակն երեկոյին Արևմտեան կողմն է , առաւօտուն՝ Արելեան կողմը , կէս օրին՝ Հարաւային կողմը , իսկ Հիւսիսային կողմը կարելի է անուանել կէս գիշերային : Արեւելք , Արևոտք , Հերան են գլխաւոր կողմեր աշխարհի : Արեելքի և Հարաւի մէջտեղն է Հերային Արևոտք . Հարաւի և Արևմուտքի մէջ տեղն է Հերային Արևոտք : Հիւսիսի և Արևմուտքի մէջ , Հերային Արևոտք : Հերային Արևոտք , Հերային Արեւելք , Հերային Արևոտք , Հերային Արեւելք , աշխարհիս կամ հորիզոնին երկրորդական կողմերն են :

ԿՐԿՆՈՒԹԵԱՆ ՀԱՐՑԵՐ . — Գտնուելով ընդարձակ դաշտավայրի մի վրայ , բոլոր երկրագունդիս երեսը կը տեսնէք թէ նորա մէկ մասը . — Ի՞նչ ձեւով երկինքն երկրիս հետ կը միանայ . — Գիծն ուր երկինքն երկրիս հետ կը միանայ , ի՞նչ ձեւ ունի . — Ի՞նչպէս կը կոչուի այս ցըանակը . և ինչո՞ւ . — Ի՞նչ է հորիզոնը . — Քանի՞ զլխաւոր կողմեր ունի հորիզոնը . — Ո՞ւր կ'ընկնին . — Օրուան ո՞ր ժամերուն արեւ կը գտնուի Արելեան , Հարաւային , Արևմտեան , և Հիւսիսային կողմերը . — Ուրեմն ի՞նչպէս կանուանուին ամէն այն տեղերը որ ընկած են մեզմէ Հարաւ , Հիւսիս , Արելեաք , Արեմուտք . — Ի՞նչպէս կամ ո՞րպիսի երկրորդական կողմեր ունի հորիզոնը , և ո՞ւր կ'ընկնին . — Ի՞նչ-

պիսի առարկաներ կը գտնուին մեր հորիզոնին մէջ . — Ի՞նչպէս պէտք է հասկանալ այս խօսքերը . Շոգենաւ երեւցաւ նորիզոնին վրայ . Արջալոյսը ծագեց . Առաւօտք ծագեցաւ , բացուեցաւ . Արեւը մարք մտաւ : Հնարեցեք , կամ կրնաք յիշել և գուք այսպիսի խօսքեր . — Դարձնելով երեսնիս հորիզոնին հարաւային կողմը , ո՞ր կողմերը կ'ընկնին մեր աջ կողմը , ձախ կողմը ու երեսի կողմը . — Իսկ եթէ երեսնիս դարձնենք , ի՞նչ կողմ կ'ընկնի հակառակ կողմը , աջ կողմը , ձախ կողմը . — Հորիզոնին ո՞ր կողմը դարձած է գտասարանին առջեի և դիմացի պատերը , աջ կողմի և ձախ կողմի պատերը . Պատուհանները , զաները ո՞ր կողմը բացուած են :

## 2. ԳԱ.ՍԱ.ՐՈ.Ն

Ո՞ւր կուսանին աշակերտաները դասի ժամանակ . — Աւսումնարանի ո՞ր կողմը կ'ընկնի մեր գտասարանը . — Ինչո՞վ է պատած նա վերէն , վարէն և կողերէն . — Ամէն մի պատը հորիզոնին ո՞ր կողմն է դարձած . — Զափեցէք և ասէք թէ՝ քանի՞ մէթր , տասնամեթր , հարիւրամեթր , և հազարամեթր է գտասարանի երկայնութիւնը , լցնութիւնը և բարձրութիւնը . — Ի՞նչ է գամուած պատերու վրայ . — Ինչո՞ւ համար են գոներն ու պատուհանները . — Ի՞նչ է կախուած արելեան հիւսիսային կողմը և հարաւային արելեան կողմը . — Ի՞նչ է դրուած գտասարանին մէջ տեղը . — Ամէնը քանի՞ զրասեղան եւ նստարան կայ գտասարանին մէջ . — Ի՞նչ-

կայ նստարաններուն կամ գրասեղաններուն մէջ տեղը . — Քանիկա՞ն աշակերտ կը նստի տմէն մէկ նստարանի վրայ . — Ուրեմն քանի՞ աշակերտ կոյ դաստանի մէջ . — Ի՞նչ կընէ ուսուցիչը դաստանի մէջ և ի՞նչ կընեն աշակերտները :

Աշակերտները դասի ժամանակ դաստարանի մէջ կ'ուսանին . — Մեր դաստարանը կը դանուի ուսումնարանի արևելեան մասին մէջ . — Նա պատաժ է վերէն առաստաղով , վարէն յատակով , կողերէն պատերով . — Առջևնիս ունեցած պատը կընկնի արևմտեան կողմը , ետեխ պատը արևելեան կողմը , ուր շինուած են լուսամուտները . աշակողմեան պատը հիւսիսային կողմը կընկնի , իսկ ձախք՝ հարաւ . — Մեր դաստարանը ունի երկայնութիւն (այսքան) , լայնութիւն (այսքան) բարձրութիւն (այսքան) . — Առեւլեան պատին վրայ բացուած են չորս պատուհաններ , հիւսիսային և հարաւային կողմերը՝ երկերկու պատուհան , իսկ արևմտեան կողմը բացուած է մէկ դուռ : Պատուհանները կը ծառայեն օդալոյս ընդունելու , իսկ դուռը երթեւեկութեան համար շինուած է : Պատերու վրայ կախուած են լինական պատմութեան պատկերները և աշխարհացոյց քարտէզներ : Հիւսիսային կողմն է վառարանը : Պատարանին արևմտեան կողմը դրուած է սև գրա-

տախտակը , արևմտեան հիւսիսային կողմը դրուած են գրասեղան և աթոռ ուսուցիչի համար : Դաստարանին մեծ մասը բռնած են աշակերտայ գրասեղաններն և նստարանները : — Գրասեղաններու և նստարաններու մէջ տեղէն մի գլխաւոր անցք , և երկու կողմերէն մէյմէկ երկրորդական անցք թողուած են : Ընդ ամէնը դաստարանին մէջ կան տասն հինգ գրասեղան և նստարան , որոց ամէնը մէկի վրայ կը նստին երկերկու աշակերտ Ուրեմն մեր դաստարանին մէջ կը դանուի երեսուն աշակերտ : Ուսուցիչը կուսուցանէ աշակերտներուն , իսկ աշակերտները կուսանին :

Համեմատեցէք եւ նկարագրեցէք դուք մէր դաստարանը :

### ՅԱՏԱԿԱԳԻՇ ԴԱՍՏԱՐԱՆԻ

Հանեցէք ձեր գծադրութեան մեծ տեսք բակները :

Այս գերքը ի՞նչ ձեւ ունի :

Եթէ դաստարանի սեւ տախտակի վրայ այս գրքի չոլա կողմէն գծեմք կաւիճով , ի՞նչ կը ձեւանալ : Եզ յւահայ գրու յւե համ քրու յագու է-էկնել :

Խ՞նչ ձեւ ունի դաստիարանի աջակողմեանք պատը . կարելի՞ է արդեօք սև տախտակի վերայ դաստիարանի պատը իւր էական մեծութեամբ գծել : Հապա ի՞նչ ձեւլ կարող եմք գծել :

Յատակադիմի վերոյ պէտք է պատը գծուի համաշափի իւր էական մեծութեան հետ , այսինքն եթէ պատի բարձրութիւնը երկու անդամ փոքր է երկայնութենին , յատակագծի մէջ երկայնութիւնը երկու անդամ աւելի պէտք է զծել բարձրութենէն , Պատուհանները պատերան վերայ պէտք է համապատասխանող թէ՛ զիրքը և թէ՛ մեծութիւնը ունենան : Խոկ այս կերպ յատակադիմ շինելու կամ գծելու համար պէտք է նախ ձողաջափի կամ աստիճան շինել , այսինքն փոքր չափ մի՛ որ փոխանակի մեծ չափի . գորոդինակի , փոխանակ մէթրօյի գործածուի հաղարերորդ ամէթր :

Ուրեմն շինեցէք ամէն մէկդ ձեզ համար ձողաջափի կամ աստիճան ( այսչափ մեծութեամբ ) և բաժանեցէք ( այսչափ հաւասար ) բաժին : Ո՞ր չափին կը փոխանակէ այժմ ձեր ամրող ձողաջափի կամ աստիճանը . — ի՞նչ կը համապատասխանէ ամէն մի ( այսչափ ) բաժինը :

Պատի երկայնութիւնը գծելու համար ամէն մէկդ ուղիղ գիծ մը գծեցէք ձեր տեսքակներուն վարի կողմը :

Չեր ձողաջափով կամ աստիճանով քանի՛ անդամ պիտի չափիք այս գիծը , որպէս զի տուրող գծին չափեալ մասը համապատասխանէ իսկական դաստիարանի պատի երկայնութեան :

Ո՞ր կողմէն պէտք է զծել գիծը որ յատակադիմի վրայ պատի բարձրութիւնը ցուցնէ :

Այժմ պէտք է միացնել քառանկիւնը , և կը լինի ի՞նչ :

Յատակագիծը կատարեալ լինելու համար ի՞նչ կը պակափ . Պատուհանները :

Ի՞նչպէս պէտք է չափել պատուհանները : Գծեցէք այժմ պատուհանները :

Նոյն կերպով առանձին թղթի վրայ գծեցէք մնացեալ պատերը :

Եթէ մեր դաստիարանի վրային փար նայիմք , ի՞նչ կը տեսնեմք մէջը :

Գծեցէք յատակը և նորու մէջ գծերով ու քառանկիւններով նշանակեցէք այն տեղերը ուր գըրուած են նստարանները , գրասեղանները , ուսուցչի աթոռն ու սեղանը , սեւ գրատախակը և վառարանը :

Կարո՞ղ էք այժմ դաստիարանի յատակին միացընել պատերը , առանց փոխելու ձողաջափի կամ աստիճանը :

Փոքրացուցէք ձեր ձողաջափը կամ աստիճանը երկու կամ երեք անդամ ու գծեցէք մանրամասն ձեր դաստիարանը :

Այսպէս գծելով մէկ դաստիարանի յատակագիծը և միացնելով միւս դաստիարանայ յատակագիծերուն հետ , նոյնպէս և ուսումնարանի միւս մասերն ևս կցելով , կունենամք ամերող ուսումնարանի յատակագիծը : Ի հարկէ այն ժամանակ ձողաջափը պէտք է վոք-

բացնել, այնպէս որ ամբողջ ուսումնարանի յատակագծի մէջ մէկ գասարանի յատակագծը հաղիւ տեսանելիք քառանկիւնի դիմ մի մինի, ուր կարելիք ըլլինի զետեղել ոչ պատաստհան, ոչ դրասեղան և ոչինչ:

#### 4. ՅԱՏԱԿԱԳԻԾ ՔԱՂԱՔԻ

Եթէ շարունակենք շափելը այնպէս ինչպէս վերը ըլլինք, և գծեմք թաւղթի վրայ յաւելյնելով հետղիւտէ մեր ուսումնարանի մօտ եղած դրայիք տուները, փողոցները, պարտէզները, եկեղեցիները, մզկիթները, հրապարակները, ծովը, լեռները, ևայլն, այսպէս փոքր առ փոքր գծած կը լինիմք մեր ամբողջ քաղաքի յատակագիծը։ Մեծ ու մանրամասն յատակագծի մէջ կը տեսնուին ամեն փողոյները, եկեղեցիները, մեծ և նշանաւոր տուները, պալատները, հրապարակները, արձանները ևայլն։ իսկ աւելի փոքր յատակագծի մէջ միայն մի քանի նշանաւոր փողոց, պալատ, մի քանի եկեղեցի, մզկիթ, ծովը, ևայլն կը տեսնուին։ Յատակագծի վրայ նայելով կարելի է որոշել թէ՝ քաղաքի մի մասը աշխարհիս կամ հորիզոնին որ կողմը

կիյնայ, և կամ այս մասը միւս մասի որ կողմը կիյնայ։ Յատակագծի վրայ նայելով կարելի է որոշել, գետերու ընթացքը։ Իսկ ձռազափի կամ աստիճանի միջոցաւ կարելի է գիտնալ քաղաքի մեծութիւնը, այսինքն սորա երկայնութիւնը, տարածութիւնը, լայնութիւնը, շրջապատը (ի՞նչպէս)։

#### 5. ՔԱՂԱՔ

Ի՞նչ դիրք ունի քաղաքն ուր մեք կը բնակեմք։

Մեր բնակած դիւղին կամ քաղաքամասին ո՞ր կողմը կ'իյնայ (այս կամ այն) գիւղը կամ քաղաքամասն։

Ի՞նչ ծովու, ի՞նչ նեղուցի, ի՞նչ ծոցի մօտ է։

Ի՞նչ գետեր կը թափուին։

Ի՞նչ համ ունի ծովի, գետի ջուրը։

Եթէ փայտի մի կտոր նետեմ ծովու, գետի մէջ, ի՞նչ կը լինի։

Գետի մի աջ կամ ձախ ափը ի՞նչպէս կը որոշուի։

Ի՞նչպէս կանուանուի այն խորութիւնը, ուսկից գետը կ'ընթանայ։

Ո՞ւր է սորա սկիզբը և ո՞ւր սորա վերջը:  
Ուրիշ ի՞նչ անուն ունի գետի մի սկիզբը  
և վերջը :

Ի՞նչ օգուտ կուտայ գետը քաղաքի մը:  
Ի՞նչ է ծովը, ի՞նչ է նեղուցը, ի՞նչ է  
ծոցը :

Ո՞ր ծովերու մօտ է մեր բնակած քա-  
ղաքը :

Ի՞նչ նաւեր կան և կը բնակին մեր նե-  
ղուցին ու ծոցին մէջ :

Ի՞նչ հաղորդակցութեան միջոցներ կան  
քաղաքի կեդրոնի ու սորա արուարձանաց  
մէջ (թէ՛ ցամաքային և թէ՛ ջրային) :

Նաւերով կամ շոգենաւերով ի՞նչ կը բե-  
րեն և կամ ի՞նչ դուրս կը հանեն և ո՞ւր :

Ի՞նչ անուն ունի մեր քաղաքի ծոցը .  
(ի՞նչո՞ւ) :

Ո՞ր գետը է նաւարկելի և ո՞րը ո՞չ :

Ի՞նչ նմանութիւն և տարրերութիւն կայ  
գետի և լճի, լճի և լճակի, նեղուցի և ջրաց-  
քի, խորշի և ծոցի մէջ :

Ի՞նչպէս է մեր քաղաքի և իւր արուար-  
ձանաց մակերեսոյթը :

Ի՞նչ կը բովանդակէ մեծ մասը այդ մա-  
կերեսոյթի և ի՞նչ փոքր մասը :

Մեր քաղաքին մէջ ի՞նչքան ժամանակ կը  
տեէ ամառը, աշունը, ձմեռը և դարունք :

Ի՞նչո՞վ կը չափուի տաքութեան ու ցըր-  
տութեան աստիճանը :

Այստեղ ամենատաք օրը և ամենացուրա-  
օրը քանի աստիճան է :

Ընդհանրապէս ի՞նչ տեսակ քամիներ կը  
փշն :

Ի՞նչ կը բերեն կամ օդոյն մէջ ի՞նչ փո-  
փոխութեան պատճառ կը լինին, երբ փշեն  
հիւսիսային, հարաւային, արևելեան կամ'  
արևմտեան քամիներ :

Ո՞ր քամին առողջարար և ո՞րն վնասա-  
կար է այս տեղի համար:

Ի՞նչե՞ր կը բուսնին մեր քաղաքի կամ  
արուարձանաց այգիներու, պարտէղներու,  
բանջարանոցներու մէջ :

Ի՞նչ տեսակ ընտանի կենդանիներ և  
թռչուններ կան մեր քաղաքը :

Ի՞նչ տեսակ ձկներ կ'որսացուին մեր ծո-  
ցի ու մեր նեղուցի մէջ :

Ի՞նչ երեւելի տեղեր և լեռներ կան մեր  
քաղաքի մէջ :

Ի՞նչո՞ւ համար են եկեղեցիները, մըզ-  
կիթները, ուսումնարանները, գործարաննե-  
րը, խանութները, իջևանները, նաւահան-  
գիստները, գատարաննական հաստատութիւն-  
ները, զօրանոցները, սոտիկանները, հիւսն-  
գանուցները, բանտերը :

Ի՞նչ պատմական տեղեր կամ արձաններ ու հնութիւններ կան :

Ի՞նչ ոստիկանական մասերու բաժանեալ է քաղաքը :

Ընդհանուր անուամբ ի՞նչ անուն կը տրուի մեր քաղաքի բնակիչներուն :

Ի՞նչո՞վ կը պարապին կամ կըզբաղին հոգեռականները, ուսուցիչները, ուսանողները, մեծամեծները, զինուորականները, վաճառականները, գործարանատէրերը, արհեստաւորները, ծառայները, մշակները :

Ի՞նչ անուն կը տրուի մեր քաղաքին, միւս քաղաքներէն աւելի պատուելու համար:

### Յ. ՎԱՍԹՈՐ

Վասփոր ծովու այն նեղ մասն է, որ երկու մեծ ցամաք (որո՞նք են) իրարմէ բաժնելով, մէկ ներքին ծով, այն է Սև ծովը, Մարմարայի և Մարմարան ալ ուրիշ նեղուցով (Տարտանէլի կամ Զանաք գալէի) Միջերկրական ծովու հետ կը միացնէ : Այս նեղուցէ ձեւացեալ է Ոսկեղջուրի ծոցը, որոյ վերին ծայրն է դետարերան մը (ո՞րն է այս գետը), Վոսփորի երկու ափանց վրայ կան :

Հատում մը խորշեր և հրուանդաններ (որո՞նք են) : Այս նեղուցովն է որ մեր նաւահանգստի մէջ գտնուած թէ՛ մեծ և թէ՛ փոքր նաւերը կը բանին և կը հաղորդակցին աշխարհիս ամեն կողմերը գտնուած վաճառաշահ նաւահանգստիսներուն հետ : այս ճանապարհով է որ կատանամք բռլոր մեր կենաց պիտոյքները : Այս նեղուցէն է որ կորսան մեղ համար համեղ ձկներ, ինչպէս թիւնիկը (իւուկ-էւկ) : թիւնուը (գուլանու), թրածուկ, ոստրէ, ձրկան ականջ, խեցգետնի, տափաձուկն, վահանաձուկն, եացն :

### 7. ԿՐՍՏԱՆԴՆՈՒԹՈՒԹՅՈՒՆ

Այս քաղաքիս ամենահին անունն է Բիւղանդիսա . երբ Յունաց կոստանդիանոս կայսրը նորոգեց զայն, իւր անուամբ կոչեց կոստանդնուպօլիս : Փամանակէ մը յետոյ Թուրքերը տիրելով այս քաղաքին (1453), Սասամպօլ անուանեցին զայն, որ աշխարհիս վերայ եղական գրիւք նշանաւոր երեք քաղաքներէն մին է : Բուն Ստամպօլը շինուած է եօթն բլուրներու վրայ, որոնք եռանկիւնաձև թերակղզի մը կը ձեւացնեն : Այս թերակղզին երկու կողմէն շրջապատուած է Մարմարա ծովով :

Պասփորի նեղուցով և Ասկեղջրի ծոցով, իսկ մէկ կողմէն կցուած է ցամաքն : Ամբողջ մայրաքաղաքը իւր արուարձաններով հանդերձ շնուած է Վասփորի երկու կողմանց երկայնութեամբ ամբիթէատրոնաձեւ երկու մեծ ցամաքի, այն է Ասփոյ և Եւրոպիոյ վերջի ծայրերուն, հին Յունաց Թրակիոյ գաւառին վերայ : Գլխաւոր տեղերն են բուն Պալմաը ու Բերան, որոնք ամբողջ մայրաքաղաքի սիրու կը կազմեն, մանաւանդ Բերան, որ Պօլսոյ բոլոր վաճառականութեան և քաղաքականութեան կեդրոնն է, վասն զի այստեղ կը բնակին բոլոր մեծ և փոքր օտար տէրութեանց գեսպաններն :


Պօլիսը ունի գրեթէ 13 մղոն շրջապատ: Ֆամանակաւ կրկնապատ ամուր պարիսպներով կը պաշտպանուէր, բայց այժմ հնութենէ և երկրաշարժերէ կործանած են սոքա . անոնց բեկորներն միայն կը տեսնուին տեղ տեղ: Դեռ կանգուն կը մնան սակայն Եէտի-Գուլէի եօթն աշտարակները, ուր ժամանակաւ քրէական յանցանքով դատապարտուղները կը բանտարկուէին: Կ. Պօլսոյ ամբողջ պարիսպը 26 դուռ ունէր, որոնք դիշերները կը դոցուէին և պահապանաց հսկողութեան ենթարկուած էին այնպէս, ինչպէս են այժմ մեծ շուկային դռները :

Պօլսոյ ունի երեւելի նաւահանդիսաւ 16 մղոն երկայնութեամբ, որ կընայ պարունակել մօտ 1200 նաւեր : Այս նաւահանդստին մէջ կը դանուի տէրութեան նաւարանը, ուր նաւեր կը շինուին և կը նորոգուին :

Մարմարա ծովուն մէջ կան խումբ մը ինն կղղեաց որք Խնչուաց հունէ կը կոչուին: Այս կղղեաց չորս գլխաւորներն են . Պրօւէ (Քընալը), Անդինէ (Պուրկաղ), Խունէ (Հէյպէլի), Պէնտէու (Պէօյիւք ատա) : Ամառը շատ մարդիկ օդափոխութեան կ'երթան այս կղիները :

Պօլսոյ շինքերու մէջ նշանաւորներն են, Թօփաբուի պալատը, Պօլսոյ արեւելեան հիւսային կողմը: Այս պալատան շրջապատին մէջ կը գտնուին զանազան նշանաւոր շինքեր, զորորինակ, դրամատունը, բժշկական դպրոցը՝ կենդանեաց պարտէզին քով, զինուորական դպրոցը, զինուուց և հնութեանց թանգարանը, կիւհանէ ըսուած քէօչկը, ուր Սութան Ապտիւլ Մէծիս ստորագրեց իւր հուշակաւոր կայսերական հրովարտակը որով բարենորոգումներ կը չնորհէր կայսրութեան :

Նշանաւոր է հաղար և մէկ սիւն կոչուած ատորերկեաց շինքը, որ պաշտպան ժամանակ իբր ջուրի շտեմարան կը ծառայէր: Այժմ՝



այդ շէնքին մէջ կը բանին մետաքսէ թելեր  
ուրբող արհեստաւորք :

Նշանաւոր շէնքերու կարգին պէտք է դա-  
սել Տօլմա Պաղչէի և Զրաղանի կայսերական  
պալատները, Պաւմէլիի և Անատօլուի ամրոց-  
ները՝ Վոստոշի երկու կողմերուն վրայ, մեծ  
վաճառանոցը, Սպարապետութեան դուռը;  
Մըսըր Զարշըսին՝ ուր կը վաճառուին արեել-  
քէն, մանաւանդ Եգիպտոսէն եկած համեմ-  
ներ . Եէրէ-Պաթան Սարայը՝ ընդարձակ կա-  
մարով մ'որոյ սիւները ջրոյ մէջ ընկղմած են.  
Քէաթիւանէի կայսերական պալատը, Սպա-  
րապետութեան պալատն ՚ի Գասրմ բաշա,  
Կալաթիոյ աշտարակը՝ 8 յարկով և 141 առ-  
ափանով: Թօփհանէի մէջ կայ թնդանօթի  
զործարան մը . Եէտի գուլէ և Մագրի գիւղ  
կան բամբակի, բուրդի և երկաթեղինաց գոր-  
ծարաններ : Սուլթան Պայազիաֆի հրապարա-  
կին վրայ կառուցուած են պատերազմական  
զործոց նախարարութեան յատկացեալ շէնքն  
( էստ սուրա կոչուած ) և ահագին աշտարակ  
մը՝ Եանկըն քէօշկիւ կոչուած՝ ուր սպասող  
պահորդներ՝ լապտեր կախելով կ'իմացնեն  
ժողովրդեան քաղաքին որ և է մէկ կողմը պա-  
ռահած հրդեհ մը :

Ա.Բ-Մէտանը կոչուած հրապարակը, որ  
ամանակաւ ձիարշաւի տեղ լինելուն համար

այդ ամսունն առած է, կը պարունակէ մի  
քանի հնութիւններ . Ա. Եէկորա-էան էնուու՝ զորս  
երեսով, վրան եղիպատական նշանագրերով և  
30 մէթր բարձրութեամբ . Բ. Օյսուու սէնը,  
անգամախառն պղինձէ շինուած, 5 մէթր  
բարձրութեամբ և երեք օձերէ բաղկացեալ.  
սոցա վիզն և գլուխը խորտակուած են այժմ:  
Գ. Կոստանդին է.է սէնը, որ այժմ բաւական  
վնասուած է: — Իբր հնութիւն կը յիշատա-  
կեմք նաև Ա.յէցեւու սէնը ( Զէմպէրի թաշ ),  
որ մօտ կը գտնուի մեծ վաճառանոցին:

Խաներու մէջ պէտք է մասնաւորապէս  
յիշատակել Վագոնէ և Եէնէ խաները՝ Զադ-  
մագճըլար Եօգուշին, և Վ.էնէր խանը՝ Թա-  
ւուգ Բաղար :

Նշանաւոր մզկիթներն են Ա.յա-Սօֆէս ըս-  
ուած մզկիթը, չորս աշտարակներով, որ կը բ-  
նայ իրաւամբ ամենանշանաւորն համարուիլ  
Պօլսոյ մզկիթներուն մէջ . Սուլթան Ա.հմէտի  
մզկիթը վեց աշտարակներով, 1810 ին կա-  
ռուցուած . Էյուսպի մզկիթը, ուր Սուլթանը  
թուր կը կապեն . Սուլթան Պայազիտի, Սու-  
լէյմանիէի, Շահ-զատէ պաշիի, Ա.գ-սարա-  
յի, Եէնի ճամփի կամ Վալիտէ Սուլթանի  
մզկիթները՝ իրարմէ առաւել կամ նուազ մեծ  
և սիրուն :

Հայք Եէտի-Պուլէի մէջ ունին Ա.զգ. Հէ-

ւանդանոց մը , որ կը պարունակէ նաև վարժարան մը որք տղայոց համար , և զոր կառուցած է բարեխշատակ Յարութիւն ամիրա Պէղճեան : Հայք այս քաղքին մէջ ունին բազում եկեղեցիներ և գլուխներ : Նշանաւորներն են . Գումագաբուի թաղին մէջ Մայր Եկեղեցին , որոյ կից է Մայր վարժարանը և դիմացն է մեր Աղքային Պատրիարքարանը : Սամաթիոյ մէջ Ա. Գէորգ եկեղեցին , այժմ աւերակ , որ ժամանակաւ Յունաց կը վերաբերի եղեր . այս եկեղեցւոյ երկու կողմը կառուցուած են քարաշէն երկու հայակապ գըպրոցներ , մին աղջիկ և միւսը մանչ տղայոց յատկացեալ : Գարակէօմբիւկի մէջ Ա. Աստուածածնայ եկեղեցին , որ բաւական նշանաւոր ուխտատեղի է : Նշանաւոր է նաև Ղալաթիոյ Ա. Լուսաւորիչ եկեղեցին և նորա կից եղող գպրոցը . նոյնպէս Բերայի Ա. Երրորդութեան և Ա. Յարութեան եկեղեցիք :

Հայք կը կառավարուին մասնաւոր կանոնագրութեամբ մը զ'որ մեզ չնորհած է Օսմանեան բարեխնամ կառավարութիւնը և որ կը կոչուի Սահանաբունիք : Ըստ այս կանոնագրութեան , ժողովրդային քուէարկութեամբ կ'ընտրուի 140 անդամներէ բաղկացեալ Աղդային Երեսփոխանական ժողով մը , որ նոյնպէս քուէարկութեամբ եկեղեցականաց մէջէն

կ'ընտրէ Պատրիարք մը , որ Աղդին պետն և ներկայացուցիչն է կառավարութեան առջև : Պատրիարքը , գործակցութեամբ վարչական խորհրդոյ մը , Աղդին ընդհանրական գործերն կը վարէ և պատասխանատու է Աղդային ժողովյա : Թաղերն կը կառավարուին Թաղական խորհուրդներու ձեռօք , որք նոյնպէս թաղեցւոց քուէով կ'ընտրուին և համարատուն Պատրիարքարանի :

### 8. ԳիՒՂ

Ո՞վ կը ընակի գիւղը : Ի՞նչո՞վ կը դրաղին գիւղացիք : Ի՞նչ գիւղական չինքեր գիտէք և ի՞նչ բանի կը գործածուին : Ի՞նչ երկրագործական գործերներ գիտէք և ինչո՞ւ կը գործածուին : Ի՞նչ անուն կը տրուի զանազան տարածութեամբ հողերուն որք մշակութեան համար որոշուած են . Ի՞նչ տեսակ բանձարներ կը բուսնին . ի՞նչ տեսակ տեսակ ընդեղեններ և բայսեր կը բուսնին այն տեղ : Ի՞նչ բանի պէտք կուգան անտառները և մարգերը : Ի՞նչպէս կը պատրաստեն ցորենը , հացը , խոտաբ : Գիւղացիք ի՞նչ կը մատակարարեն քաղաքացւոց : Գիւղացիք ձմեռը ի՞նչպէս կանցունեն : Ի՞նչ տարրերութիւն կոյ քաղաքի , գիւղի , աւանի , շնի մէջ :

Թ. ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՔԱՐՏԵԶ ԿԱՄ

ԱՇԽԱՐՀԱՅՈՅՑ

Ինչ կերպով որ քաղաքի յատակադիմը գծեցինք, կը նամք նոյն կերպիւ գծել և մեր քաղաքի գրացի քաղաքները, գիւղերը, գետերը, լճերը, անտառները, լեռները, ծովերը, այսինքն մեք կարող եմք մէկ թերթ թուղթի վերայ գծել մեծ տարածութեամբ տեղւոյ մը յատակադիմը, որոյ երկայնութիւնը և լայնութիւնը կը լինի ոչ թէ քանի մը քիլոմետր, այլ քանի մը հարիւր, քանի մը հազար և շատ աւելի մղններ։ Միմիայն, այսպիսի յատակագծի վրայ քաղաքները կը նըշանակուին իբր մի փոքր շրջանակ կամ կէտ (ինչո՞ւ համար)։ գետերը կը նկարուին գողդովն գծերու նման, ևայլն, ևայլն։ Այսպիսի յատակագծի մը, որոյ վերայ աշխարհի մը զանազան տեղերը նշանակեալ կը լինին զանազան պայմանեալ նշաններով, կանուանուի աշխարհական բարձրացուցութեան աշխարհական բարձրացուցութեան :

Աշխարհացոյց տախտակներու վերայ հորիզոնի կողմերը հետևեալ կերպիւ կը նշանակուին :

Հիւսիս

Արեւմուտք

Արեւելք

Հարաւ.

Վերը հիւսիս, սորա հանդէպ վարը հարաւ, աջ կողմը արեւելք, սորա հակառակ ձախ կողմը արեւմուտք, ինչպէս մեր բնակած կոստանդնուպօլիս քաղաքին Սրբելեան կողմն է Տրապիզոն, Արեւմուտքան կողմն է Յոստովիո, Հիւսիսային կողմն է Ա. Բնդրսպուրկ, Հարաւային կողմն է Աղեքսանդրիա :

” Բելլրսպուրկ

Բօտոոսքո կոտտան գնուապոլիս Տրապիզոն

Աղեքսանդրիա

## 10. ԵՐԿՐԱԳՈՒՆՑ

ԹՇեւ Թիւրբիսն , համեմատելով երկրագնդիս վրայի մնացեալ աշխարհներու հետ , մեծ աշխարհ է , այսու ամենայնիւ փոքր տեղ կը բռնէ երկրագնդիս մակերեսով թիւն վրայ :

Ասդէն գիտեմքը թէ երկրագնդիս մի որ և է տեղը մեղ կը թուի լինիլ իբր տափարակ շրջանակ մը ուր երկինքը կամարաձեւ կը միանայ այդ շրջանակին , և իբր թէ՝ արեւ կը դառնայ երկրիս շուրջը : Բայց և այնպէս այդպէս չէ . երկիրս չէ տափարակ , այլ է դընդաձեւ , և մեղ երեցած կապոյտ երկինքն է այն օդը որ շրջապատած է երկրագունդը , և արեն չէ որ երկրիս շուրջը կը դառնայ , այլ ընդհակառակն երկիրս է որ կը դառնայ արեգական շուրջը :

Մեր բնակած երկիրն այնպիսի մի մեծ գունդ է որ մարդ զայն կը համեմատէ այնպէս ինչպէս աւաղի հատիկ մը նարնջի հետ . անոր վրայ գտնուած ամենամեծ լեռները կը նմանին համեմատաբար նարինջի կեղենն վերայի ուռեցքներուն : Ճանապարհորդք տարիներու կը կարօտին նորա շուրջը մի անդամ ժանապարհորդելու համար : Մեր երկրագունդը մեղ հետ կը դառնայ արեւի շուրջը մի և նոյն ժամանակ դառնալով իւր վերայ ,

ինչպէս որ կառքի մը անխոր գառնալով իր առանցքին վերայ , մի և նոյն ժամանակ կը յառաջանայ ճանապարհին մէջ : Եւ որովհետեւ երկիրս է գնդաձեւ , արեգակը կարող չը լինիր նորա ամէն կողմերն միանդամայն լուսաւորեւ , այլ այն կողմն որ դարձած է դէպ ՚ի արեւ , է լուսաւորեալ օք . իսկ նոյն ժամուն նորա հակառակ կողմը կը լինի չէլչէ :

Եթէ առնումք երկրագունդը ( ի՞նչ է սա ) և գնենք կանդեղի կամ ճրագի մը առջեւ և գարձնեմք իւր առանցքի վերայ , կը նկատեմք թէ ինչպէս դա կը լուսաւորէ փախադարձար գունդին երբեմն մի կողմը և երբեմն միւս կողմը : Երկրագնդիս շարժումը մենք չենք զգար , առաջին նորա համար որ երկիրը շատ մեծ է , երկրորդ որ իւր ընթացքն խիստ արագ է : Եթէ շոգեկառքով կամ հասարակ կար շոլ արագ ճամբայ ընենք , մեղ կը թուի թէ ճանապարհին լիոները , գաշտերը , ծառերը , տները , երկու կողմի գտնուած առարկայները կը վաղեն . այսպէս ալ արեգական վրայ տեսնուած շարժումը աւերեւոյթս է միայն և երկիրս է շարժողը :

Երկիրս արեգական վերայ իր շրջանը կը նէ մէկ տարուան , այսինքն Յնձ օրուան մէջ , իսկ ինքն իւր վերայ կը դառնայ մի օրուան , այսինքն 24 ժամոււան մէջ : Ասկէ յառաջ

կուգան երկու տարրեր շրջաններ, ու բեկան և  
օրոշան :

Երկիրս կը դառնայ ինքն իր վերայ ինչ-  
պէս անիւ մի իւր առանցքին վրայ, և այս  
պատճառաւ երկրիս մէջ տեղը երեւակայեալ  
դիմը կ'անուանի երկոյն առանց : Ուրեմն երկ-  
ոյն առանցն է այն երեւակայեալ ուղիղ դիմը  
որուն վերայ կը դառնայ երկիրս : Առանցքին  
երկու ծայրերը կանուանին բեւեւ, Հետային  
բեւեւ, Հարաւայն բեւեւ :

Օրուան ցորեկ ժամանակ երկնից վերայ  
կը տեսնեմք արեգակը, իսկ զիշերը կը տես-  
նեմք լուսինն և երկնային լուսաւոր հայծեր : Այս  
երկնային լուսաւոր կայծերն են, ասողեր, ճա-  
շբաներ, աբանեաներ ու գիտառներ : Աստղերն  
են այնպիսի երկնային մարմիններ (ինչ է) որ  
ինքնին լուսատու են, ինչպէս արեգակը : Ուս-  
տի արեգակն է ինքնալոյս երկնային մարմին,  
նաև մեր երկրագնդին ջերմութիւն և լոյս  
առւողը : Մոլորակներն են երկնային խաւար  
մարմիններ որ իրենցմէ լոյս չունին և իւր-  
եանց լոյսը կ'առնուն մօտակայ աստղերէ,  
այս մօլորակներէ են երկիրս և լուսինը : Լու-  
սինն է երկրիս արբանեակը, որ արեգական  
վրայ դարձած ժամանակ կ'ընկերանայ անոր  
հեա : Գիսաւոր կ'անուանին այն երկնային  
մարմինները որ կը զանազանին ուրիշ աստղեր

րէն այն լուսաւոր գծով զոր իրենց ետևէն կը  
ձգ 'ն և որ կանուանի ագի :

Ուրեմն երկեր հացածի է . երկեր հետառայ ջե-  
րանիւն և լոյս որեէուկն և լուսինն է երկեր որբան-  
եակը . երկեր է ճնդայլ . երկեր ա-նի երկու պեսու-  
շուժամ, առբեկան և օրոշան :

Երկիրս իւր առանցքին վերայ դարձած  
ժամանակ, առանցքին երկու ծայրերը ան-  
շարժ կը մնան միշտ . իսկ երկրիս մակերեսոյ-  
թին վերայի միւս կէտերը մեծ կամ փոքր  
շրջանակներ կը կազմեն : Այս շրջանակ-  
ները, որ երեւակայութեամբ կը գծուին  
երկրիս վերայ, կանուանին լուսաւոր հներ :  
Ամենամեծ զուգահեռական գիմը բեւեռնե-  
րէն հաւասար հեռաւորութեամբ կ'անցնի և  
կանուանի հասորուհած : Հասարակածը կը բա-  
ժանէ երկիրը երկու հաւասար կիսագունդի,  
Հետայինն և Հարաւայն :

Որովհետեւ կէս օրը կը լինի ամէն կէտի  
մի և նոյն ժամանակ ուղիղ հայեացքով հիւ-  
սիսէն գէպ 'ի հարաւ, այն պատճառաւ շրջ-  
անակներն որ գծեալ են բեւեռէ բեւեռ,  
կ'անուանին գջջեսկուն հներ :

Երկրագնդի վերայ գծեալ շրջանակներն ու  
միջօրէական գծերը կը կազմեն աստիճաններ,  
այնպէս որ ամէն մի շրջանակ բաժաննեալ է 360  
հաւասար մասերու, որոնք առին կ'անուանին:

Բոլոր միջօրէականները հաւասար են միմեանց, հետևաբար աստիճաններն եւս միակերպ : Ամեն մի աստիճան ունի 15 աշխարհագրական մղոն : Հասարակածի աստիճանը հաւասար է միջօրէականի աստիճանին հետ . իսկ մնացեալ զուգահեռական գծերուն աստիճանները, քանի կը մօտենան բեւեռներուն, կ'սկսին փոքրանալ : Այսպէս

40րդ զուգահեռականը հաւասար է  $14\frac{3}{4}$  աշխարհագրական մղոնի .

25րդ զուգահեռականը հաւասար է  $13\frac{1}{2}$  աշխարհագրական մղոնի .

45րդ զուգահեռականը հաւասար է 10 աշխարհագրական մղոնի .

60րդ զուգահեռականը հաւասար է  $7\frac{1}{2}$  աշխարհագրական մղոնի .

62րդ զուգահեռականը հաւասար է  $6\frac{1}{2}$  աշխարհագրական մղոնի :

Երկրագունդերուն ու քարտէզներուն վրայ զուգահեռական և միջօրէական արջանակները կը գծուին 5,10 և 15 աստիճանով, բայց աւելի ճիշդ հետազոտութեան համար կը գործածուին՝ բացի աստիճաններէ՝ բոլէ և երկվարկեան, ամեն մէկ աստիճան բաժնելով 60 ըոպէի և ամէն մէկ ըոպէ 60 երկվարկեանի : Սոյն աստիճաններով կարելի է որ և իցէ տեղւոյ մը գիրքը որոշել երկրագնդին

վերայ . ասոր համար պէտք է նայիլ թէ՝ այս ինչ տեղը միջօրէական գիծերով հասարակածէն քանի՝ աստիճան գէպ՚ի հիւսիս կամ՚ի հարաւ ընկած է, և յետոյ պէտք է հաշուել թէ՝ որ և իցէ զուգահեռական գիծ առաջին զուգահեռական գծէն քանի՝ աստիճան հեռու կ'ընկնի գէպ՚ի արևելեան կամ արևմտեան կողմք : Առաջին կամ գլխաւոր միջօրէական գիծ կ'անուանի այն՝ ուստի կ'ըսկսի հաշիւը : Այս միջօրէականով երկրագնդին երեսը ընդհանրապէս երկուքի կը բաժնուի, արևելեան և արևմտեան : Գիտնալով այս ամէնը, գիւրին է որոշել Կոստանդնուպօլսոյ, Նիկոմիդիոյ, Զմիւռնիոյ և այլ տեղեաց գիրքերը :

Լայնութեան սորիճաններ կանուանին այն աստիճանները որ գծուած են հասարակածէն գէպ՚ի միջօրէական . այս աստիճաններն որոշեալ կէտէ մը գէպ՚ի հիւսիս կամ հարաւ կը հաշուին : Իսկ երկայնութեան սորիճաններ կանուանին այն աստիճանները, որ առաջին միջօրէական գծէն զուգահեռականներուն վրայոք որոշեալ կէտէ մը գէպ՚ի արևելք կամ արևմտուաք կը համրուին : Ուրեմն լայնութեան աստիճաններն կը լինին հիւսիսային և հարաւային, իսկ երկայնութեան աստիճանները՝ արևելեան և արևմտեան :

Լայնութեան աստիճանները իրենց մէջ հաւասար են, իսկ երկայնութեան աստիճաններն ո՛չ (ինչո՞ւ): Երկու որոշեալ տեղերու լայնութեան և երկայնութեան աստիճանները գիտնալէ յետոյ կարելի է մտառորապէս հաշուել իրարմէ ունեցած հեռաւորութեան չափը: Զուգահեռական գծերուն գլխաւորներն են ոյքեցեւ ու բեւեռային բորբնէը:

Ա.Յ-Ռ-Յ կանուանին այն զուգահեռական գծերը որ հասարակածէն գէպ ՚ի հիւսիս և գէպ ՚ի հարաւ 23<sup>1/20</sup> աստիճանով կը հեռանան: Ա.յս արեագարձներէն հիւսայինը կը կոչուի Ա.Յ-Ռ-Յ ԵԵՀԵՊԱէ, իսկ հարաւայինը Ա.Յ-Ռ-Յ Ա.Յ-Ռ-Յ: Բևեռային շրջանակներ կանուանին այն զուգահեռական շրջանակներն որ հասարակածին երկու կողմերէն 66<sup>1/20</sup> աստիճանով կը հեռանան, որով և բևեռներէն 23<sup>1/20</sup> ով հեռու գծուած կը լինին (ինչո՞ւ): Հիւսային կիսագործյ բեւեռային շրջանակը կանուանի հէ-սէսային բեւեռային ուշաւաէ, իսկ հարաւային կիսագործյ բեւեռային շրջանակը կանուանի հարաւային բեւեռային ուշաւաէ: Ա.յրեցեալ ու բեւեռային շրջանակները կը բաժնեն երկրագունդը հինգ գօտիներու: մէկ այրեցեալ, երկու բարեխառն և երկու սառուցեալ: Ա.տուցեայ գօտիներն կը տարածուին

բեւեռէն մինչեւ բեւեռային շրջանակները բարեխառն գօտիներն կը տարածուին այրեցեալ և բեւեռային գօտիներու մէջ տեղը, իսկ այրեցեալ գօտին կը լինինի հասարակածին երկու կողմը այրեցեալ շրջանակներուն մէջ տեղը:

#### 11. Ա.ՇԽԱՐՁԻ ՄԱՍԵՐ ԵՒ ԱՎԿԻՆՆՈՒՅՆԵՐ

Ա.մբողջ երկրագունդիս մակերեւոյթը կը ձեւանայ ցամաքէ և ջուրէ: Ցամաքը բաժանեալ է երեք մեծ և շատ մը փոքր մասերու: Ա.յս մեծ մասերը կ'անուանին ցամաք, իսկ փոքր մասերը կ'անուանին կղզի: ցամաքները ու կղզիները շրջապատեալ են ջրով և կը դանաղանին իրարմէ միայն մեծութեամբ: Արեւեան կիսագունդը ունի երկու ցամաք, արեւեան և հարաւային: իսկ արեւմտեան կիսագունդը ունի մէկ, որ է արեւմտեան ցամաք:

Բացի այս բաժանմունքներէն, ցամաքը կը բաժնուի այլ և այլ աշխարհներու: Գիտաւոր աշխարհամասերն հինգ են: Երեքը կը գանուին արեւելեան կիսագունդի վրայ, Եւրոպա, Ասիա և Աֆրիկէ: արեւմտեան կիսագունդի վրայ կը գտնուի չորրորդ աշխարհա-

մասը , Ամերիկա , որ իւր մօտակայ կղղինք .  
ըով կը կազմէ հինգերորդ աշխարհամասը , այն  
է Աւստրալիան :

Յամաքները կը բամնեն ջռւրը հինգ մա-  
սերու կամ ովկիանոսներու . Հիւսիսային սա-  
ռուցեալ Ովկիանոս , որ կընկնի հարաւային բե-  
ւեռային շրջանակին մէջ . Ս.դլանդեան Ովկիա-  
նոս , որ կընկնի Եւրոպիոյ , Ափրիկէի և արկ-  
մտեան ու արեւելեան Ամերիկայի մէջտեղ . Մեծ  
կամ Խաղաղական Ովկիանոսը որ կընկնի Ա.սիոյ  
արևելեան և Ամերիկայի արևմտեան կողմը .  
Հնդկական Ովկիանոսը որ կընկնի Աւստրա-  
լիոյ արևմտեան , Ասիոյ հարաւային և Ափրի-  
կէի արևմտեան կողմը :

Եւրոպա , Ասիա և Ափրիկէ կանուանին  
հին աշխարհներ , երկար ժամանակէ ՚ի վեր ծա-  
նօթ լինելուն համար . մնացած աշխարհի մա-  
սերն , որոց ետքէն ծանօթացան Եւրոպացիք ,  
կոչուեցան նոր աշխարհ : Ասոնցմէ Ամերիկան  
1492 թուականին գտնուեցաւ Քրիստափոր  
Գոլոմպոս անուն Ճենովացի նաւապետին ձե-  
ռօք , որ աղջաւ Խտալացի էր : Սա սուաջին  
եղաւ , որ յանդգնեցաւ ընդարձակ Ովկիանո-  
սին մէջ յառաջ խաղալ , ուր ընդհակառակն  
մինչեւ իւր ժամանակ կը ճանապարհորդէին  
առանց երբէք եղերքներէն հեռանալու , որով  
շատ դժուարութիւն կրեց համոզելու իւր

հետ ճանապարհորդողները : Գոլոմպոս 1492  
ին օգոստոս ամսոյն Պօլս Սպանիական քա-  
ղաքէն երեք նաւով ճամբայ ելաւ Ա.դլան-  
տեան Ովկանոսին մէջ միշտ դէպ ՚ի Արևմուտք  
յառաջանալով : Այս երկար ճամբորդութեան  
մէջ ստէպ նաւաստիները կ'ընդվիպէին ու  
կը բռնագատէին գ'ինք ետ դառնալու ,  
եթէ ո՞չ կ' սպառնային ծովը նետել գ'ինք :  
Բայց ինք իւր բնութեան ուժովը կը համա-  
դէր զանոնք , որոնք կը հնագանդէին իրեն :  
Յետ եռամսեայ ճանապարհորդութեան , վեր-  
ջապէս Գոլոմպոս իւր ֆափագանացը հա-  
սաւ . նա դտաւ անյայտ կղղիներ և անուա-  
նեց Արևմտեան Հնդկաստան . ասոնց մէջ  
ամենամեծն է Քուպա կղղին : Այս կղղւոյ  
ընակիները կ' ապրէին անտառներուն մէջ .  
մորթերնուն գոյնը կարմիր պղնձագոյն է . բո-  
լորովին զուրկ են քաղաքակրթութենէ : Առ-  
քա սպիտակ մարդիկը Ա.ստուծոյ տեղ գրին  
և նաւերը թեւաւոր հրէշներու , թնդանօթ-  
ներն ա որոտման ու կայծակի տեղ : Գոլոմ-  
պոս ի ը միւս ճամբորդութեանց մէջ դտաւ  
բուն Ամերիկայի ցամաքը , Օլդինիկոյ գետին  
քով : Գոլոմպոսի դտած երկիրները առաջին  
անգամ նկարագրողն եղաւ Ա.մերիկոս Վեռ-  
բուշին , որոյ անուամբ նոյն աշխարհը կոչուե-  
ցաւ Ամերիկա :

Աւստրալիա և Ովկանիա գտնուեցան ձեռամբ Մագելանի և Կուքի : Մագելան, ծննդեամբ Փորթուգալցի, 1519 ին Ապանիայէն հինգ նաւով և 200 նաւաստիներով ճամփայ ելաւ Ատլանտեան Ովկանոսի մէջ գէպի Առևմուտք . յետոյ Ամերիկայի եղերքներուն մօտ Թօք հրուանդանի մօտ դարձաւ զէպի հարսու և գտաւ նեղուց մը որ իւր անուանի կոչուեցաւ նեղուց Մագելանի : Այս ջրանցքով ելաւ նա Մեծ Ովկանոսի մէջ և յառաջ դնաց գէպի հիւսիս և յետոյ հաստրակածի մօտ դարձաւ զէպի Արևմուտք : Երկար ճամփորդութենէ ետք գտաւ շատ մի կղղիներ , զորոնք անուանեց Աւագակաց կըզպիք , որտիշեաև բնակիները վրանին յարձակեցան թունաւորած նետերով : Աւելի յառաջ զնալով գտաւ ուրիշ կղղիներ ևս որ յայտնի են մեղ Ֆիլիպեան կղղիք անուամբ : Այստեղ զինքն սպաննեցին վայրենիները , իսկ իւր ճանապարհորդակիցները շարունակեցին իրենց ժանրան և 1527 ին մէկ նաւով և 18 նաւաստիով դարձեալ Աղլանտեան Ովկանոս դարձան , բայց միւս կողմէն : Այս ճանապարհորդութիւնը բայց ի Մեծ Ովկանոսը և շատ մը կղղիներ երեան հանելէն , նաև երկրիս զընդան լինեն հաստատեց :

Միւս ճանապարհորդը Կուք , աղղաւ Անդ-

դիացի , Երեք ճանապարհորդութիւն ըրաւ . Երկու առաջին ճանապարհորդութեանց մէջ գըտաւ անյայտ կղղիներ Աւստրալիայ եւ Ովկանիոյ մէջ , ինչպէս Նոր Զելանտ , Սանտուի կղղիք . ճանապարհորդեց և հետազոտեց Նոր Հոլանտան , իսկ երրորդ ճանապարհորդութեան մէջ 1779 ին Վուք սպաննեցաւ Սանտուի կղղիներու մէջ :

Քառասուն և հինգ տարի յետոյ Ուուս Բելլինք Հառողէն գտաւ հիւսիսային բեւեռին մօտ անշարժ ձիւնէ և սառերէ լեռներ որոցմէ մակարերեց թէ պէտքէ մօտը ցամաք երկիր գտնուի : Աւելի մեծ գիւտ ըրաւ Տիւմոն Տիպվիլ Ֆուանսիացին Հարաւային բեւեռի մօտ . նա մօտեցաւ սառուցեալ եղերք մի և հօն նաւաստիներ հանեց որոնք մաքլիքով ելան ու գտան զանազան թուններ և կըրանիթի կտրտուածք : Այսու բուլորվին համոզուեցաւ որ Հարաւային բեւեռի մօտ կայ մի ցամաք որ կըլինի վեցերորդ մասն ցամաքի :

Այսպէս եթէ բաժանեմք երկրագունոր հասարակածէն երկու հաւասար մասերու , Հիւսիսային կիսադնտի և Հարաւային կիսադունտի , կըտեսնեմք որ Հիւսիսային կիսադնտի վրայ կիյնան Եւրոպա , Ասիա , Հիւսիսային Աֆրիկէ և Հիւսիսային Ամերիկա : Իսկ հարաւային կիսադնտի վրայ կ'իյնան Հարաւային

Ամերիկա, Հարաւային Ափրիկէ, Աւստրալիա, մասն Ովկիանիոյ, և վեցերրորդ ցամաքը։ Ուստի կը տեսնեմ հիւսիսային կիսագունդի վրայ աւելի ցամաք, իսկ հարաւային կիսագնդոյ վրայ աւելի ջուր։

Արևի կողման	Ա. Ռէկէ
	Ա. Գրէկէ
Երկու կողման	Ա. Քրէմ
	Ա. Առութէ
Մեջ Ուղիղանու	Ա. Պլանտէ. Ուզի.
	Հարդական Ուզի.
Հայտ. սառ. ովչի.	Հայտ. սառ. ովչի.
	Հիւս. սառ. ովչի.

Բոլոր Աշխարհամասանց մէջ ամենէն մեծն է Ասիան . յետոյ իւր մեծութեամբը կուգայ Ամերիկան, յետոյ Ափրիկէ, Եւրոպա, Աւստրալիա : Ասիան հինգ անդամ մեծ է Եւրո-

պային, Ամերիկան երեք ու կէս անդամ . Ափրիկէ երեք անդամ . Աւստրալիա փոքր ինչ փոքր է Եւրոպային : Ցամաքը երկրագնդին մակերեւութիւն մէկ երրորդ մասը կը բանէ . միւս երրորդ մասը կընկնի բաժին միմիայն Մեծ Ովկիանոսին, իսկ միւս չորս Ովկիանոսները կը կազմեն երկրագունդի մակերեւութիւն մնացեալ երրորդ մասը :

Նախորդ երեսի պատկերը իրապէս կը ցուցունէ ջուրի և ցամաքի աարածութեանց համեմատական չափը :

## 12. ՅԱՄԱՔ

### 1. ՏԱՓԱՐԱԿ ԿԱՄ ՀԱՐԹ ՏԵՂԵՐ

Ցամաքի վերայ շատ տեղեր կամ ծովու մակերեւութիւն հաւասար բարձրութիւն ունին և կամ կը ձեւացնեն գրեթէ աննկատելի բարձրութիւններ, որոնք ծովու երեսէն 210 քայլէ աւելի չեն բարձրանար. իսկ կան տեղեր որ ծովու երեսէն մինչև մէկ մղան բարձրացած են : Առաջիններն են փոքր բարձրութիւններ, բարձրեր, միւսները կը կոչուին լըռներ :

Փոքր բարձրութիւնները կամ բլուղները իւրեանց գերքով կը լինին գետեղբեայ ծովափնեայ և ներքին :

Գետեղբեայ տափարակ տեղերը ամենաւ-  
մեծ յարմարութիւն ունին մարդուս կենաց  
համար : Եատ գետեր տարեկան ողողութե-  
ռով շատ բարերեր կընեն երկիրները , որով-  
հետեւ ջուրերը յետ քաշուելէն յետոյ կը  
թողնեն սեւ ցեխ (տիղմ) որ ձեւացած է ջու-  
րի մէջ մնացած և փթած բոյսերէն , կենդան-  
եաց ոսկորներէ և ուրիշ հանքային նիւթերէ .  
(ինչու սա օգտաւետ է) : Ամենաբարերեր  
տափարակ տեղերը կը գտնուին հետեւեալ  
գետերու եզերները . Նեռ՝ Եղիպտոսի մէջ,  
Դեռև և Կապոյք՝ Ջինաստանի , Խնճոս և Գանձէ՝  
Հնդկաստանի , Փօ՝ Իտալիոյ մէջ :

Ս.յսլիսի տեղեր արդէն շատոնց հին ժա-  
մանակէն ի վեր նշանաւոր են խրեանց առաս-  
պտղաբերութեամբ , այնպէս որ պէտք եղած  
ժամանակ այդ երկիրներէն միշտ կարելի է հաց  
ստանալ : Ահա այսլիսի տափարակ տեղե-  
րու վերայ է որ մարդիկ մշտակեաց բնա-  
կութիւն ունենալու վարժուեցան , այսինքն  
սովորեցան եզանակներու կամ ոյլ պահանջ-  
ներու համաձայն չը փոխել բնակութիւնը ,  
այլ մնալ միշտ միենոյն տեղը , և ազատ երկ-  
րագործութեամբ աշխատիլ : Այսպէս կազ-  
մելով մարդկային ընկերութիւններ—այն է Պե-  
տութիւններ—շինեցին մշտական բնակութեան  
համար բնակարաններ , գիւղեր և քաղաքներ ,

որովհիւտեւ երկրի մշտակութիւնը կը պահան-  
ջէ , առաջին՝ հաստատ և անվտանգ բնակա-  
րան և երկրորդ՝ միարան , ընկերակցական աշ-  
խատութիւն : Պատմութենէ մեզ յայտնի է որ  
առաջին , ոյն է ամենահին ժամանակներէ՝ ՚ի վեր  
երկրագործութեամբ պարապող ժողովուրդ-  
ները կամ ազգերն էին Հնդկաստանցիք , Զի-  
նաստանցիք , Եգիպտացիք , որոնք կը ձեւա-  
ցնէին կազմակերպեալ պետութիւններ : Արդի  
Լուրսպիոյ ամբողջ ժողովուրդը մշտաբնակ է :  
Մշտաբնակ ժողովուրդները բաց ի երկրա-  
գործութենէ , կ'զբաղին ևս՝ գիտութեամբ ,  
արհեստիւ , վաճառականութեամբ , և այդ  
պատճառաւ կը կոչուին լուսաւորեալ : Ահա  
ասոր համար է որ Եւրոպան լուսաւորեալ եր-  
կիր կ'անուաննեմք :

Ծովափնեայ տափարակ տեղերը մեծաւ  
մասամբ աւագուտ են և անյարմար երկրա-  
գործութեան , և այդ պատճառաւ եղերային  
բնակինները կամ ձկնորսութեամբ կամ վա-  
ճառականութեամբ կ'զբաղին , եթէ ծովը խո-  
րունկ և խաղաղ է եղերաց մօտ և յարմա-  
րութիւն կայ նաւահանգիստ շիներու :

Ծովեղերեայ փոքր բարձրութեանց վերայ,  
ուր քամին համարձակ կը փչէ . կը ձեւանան  
տեղափոխուղ աւազաբլուցներ :

Այս աւազաբլուցները կը ձեւանան հե-

աեւեալ կերպիւ։ Աւազը դետի հոսանքի հետ  
կը ժողուուի կը թափուի ծովը ուր այսպէս  
կը ժողուուին ահագին քանակութեամբ։ Ե-  
թէ եղերքները տափարակ են, ծովու ալեաց  
ե քամիի ուժով աւազը կը քշուի դուրս մինչ  
երկրիս ներսերը, որով կը ձեւանան աւա-  
զային անապտղաբեր տափարակ երկիրները։  
Իսկ եթէ ծովափը զառ ի վայրուտ է, այնտեղ  
կը ձեւանան բարձր բլուրներ, գրեթէ մանր  
աւաղային լեռներ, որոնք ուղիւ քամիներու վր-  
չելին կը տեղափոխուին, թաղելով, ծածկելով  
ճանապարհին վրայ գանուող տեղերը, թու-  
փերը, պարտէզները, գիւղերը, քաղաքները,  
մանաւանդ եթէ չը պատահին անտառ կամ  
ւռներ։ Այս աեղափոխուող աւաղային բլ-  
րուրները շատ մեծ վնաս կուտան Գաղղիոյ և  
Տանիմարքայի եղերաց և մանաւանդ աւելի  
վուանդաւոր են նաւերու համար։ Աւազա-  
րլուրներ ծովուն ներքեւ ալ կը գտնուին, ինչպէս  
Ա.փրիկէի արեւմտեան եղերը, ուր ծովը  
Սահարայի աւաղներէն այնչափ ծանծաղցեր  
է որ մարդ բաւական հեռուն գնալու է որ  
ջուրը մինչեւ ծունկը համան։ Եղերային բնա-  
կիները դուշութեան համար կը շնեն կամ  
թումբեր, ինչպէս Հոլանտացիք, կամ կը  
անկին ծառեր ինչպէս Ֆրանսացիք։

Յամաքի ներսերը գանուած տափարակ

տեղերը կամ անապատ են կամ տափաստան։  
Սահարհիս ամենամեծ անապատն է  
Սահրա, որ տարածուած է ամբողջ Հիւսիսա-  
յին Ափրիկէի մէջ. ունի արեւելքէն դէպ  
արեւմուար 6325 մղոն տարածութիւն, իսկ  
հարաւէն հիւսիս 1827 մղոն։ Աւելի փոքր  
անապատներն են Կորի կամ Շամօ, Սնա-  
պատն Սրարիոյ՝ Ասիոյ մէջ։

Անապատներն անվերջանալի ահագին  
տարածութիւններ կը կազմեն երկրի վրայ ա-  
ռանց ջրոյ, առանց բուսականութեան, ծած-  
կուած մանր աւազօք, ուր հազիւ ուրեք կը  
պատահին բարեբեր տեղեր՝ ոռոգեալ ակնե-  
րով, աղբիւներով, ուր և կը բարձրանան ար-  
մաւենիի ծառեր և ուր կան գիւղեր և քաղաք-  
ներ։ Այսպիսի բարեբեր տեղերը կը կոչուին  
Ուշու։ Անապատի մէջ ճանապարհորդելը բոլո-  
րովին անկարելի պիտի լինէր, եթէ չլինէր ուղ-  
տը և այնտեղի արմաւենիի պտուզը։ Ուղտը,  
այս խելօք, համբերատար և հնազանդ կենդա-  
նին միայն կարող է տոկալ ծարաւի և անօթու-  
թեան և կրել ապրանք։ Արմաւենին բարձր և  
բարակ ծառ մ'է բոլորովին մերկ բունով,  
որոյ տերեւները միայն գլուխէն կախուած են  
փունջինման, և որ մեծ օգուտ կուտան այնտեղի  
բնակչաց։ Արմաւենիի պտուզով, արմաւով,  
իրենք կը կերակրուին, իսկ ջրի մէջ թրջած

և փափկացուցած կորիզները կուտան ուղտերուն։ Փայտը վառելու համար կը գործածուի. ճիւղերովը կը ծածկեն իւրեանց բնակարանները, հիւղերը, և ոսաերէն կը գործեն կը չիւսեն կողովներ : Արմաւենիք ընդհանրապէս կը բուժնին Ովասիմներու մէջ, բայց և երբեմն անապատի մէջ ևս կը գոյանան :

Անապատներու բնակիչները քշելով իւրեանց հօտերը մէկ Ովասիսէ միւսը, թափառական կեանք կ'անցնեն : Կարավանով առուտուր կընեն միմեանց հետ, իւրեանց բեռները ուղտերով տանելով եւ արմաւով կերակրուելով :

Կարավան կը կոչուի բերձած ուղտերու շարք մը որ կը ճանապարհորդէ : Պէտք է և գիտնալ թէ ինչպիսի աննկարադրելի գըժրաղդութիւն է, երբ այսպիսի կարավանները աւազային անապատի մէջ կը հանդպին Սահաւանուանեալսատիկ քամիի, որ կիզիչ աւազը իրը սիւն ահագին կը բարձրացնէ օդին մէջ : Այս աւազը խիստ արագութեամբ կը տեղափոխուի մէկ աեղէ միւսը, լեցնելով մարդոց և կենդանեաց աչքերը, և երբեմն թաղելով զանոնք իրեն տակը : Բաց ի քամիներէն, կարավանները անհանգիստ կը լինին նաև արիւնարբու գաղաններէն, ինչպէս առիւծ, վագը, բորեան, որոնք տարածուած են անապա-

տի մէջ և որո կը վնատուեն իւրեանց համար : Ամենամեծ տափաստանները կը գտնուին Ամբրիկա . նոցա մէջ կը բուժնին խոտ և ծաղիկ մարդու հասակի բարձրութեամբ : Ծաղիկներով ծածկուած թուփեր, շեփորուկ կամելիա, վայրի կեռասենի, և ուրիշներ կը զարդարեն տեղոյն բուսականութիւնը : Ամերիկեան տափաստաններուն վերայ հովիւները կ'արածեն ահագին քանակութեամբ հօտեր ոչխարներու և ձիաններու, երբեմն քանի մը հաղարներով բաց ի սոցանէ տափաստաններու վրայ կը թափառին վայրենի գոմէշներ : Որովհետեւ Ամերիկեան տափաստանները մեծաւ մասամբ տաք գօտոյ մէջ են ընկած, ուստի և լաւ են ձմեռնային եղանակին : Երբ կըթափուին արդասաբեր անձրեւները, խոտաերը կը կամնաչեն, թուփերը ծաղիկներով կը զարդարուին, կենդանիք և մարդիկ կը զուարթանան : Բայց ամառնային անտանելի տաքութեան ժամանակ խոտերը կըչորնան, թուփերը կը դադրին ծաղկելէ, գետերը կը ցամաքին . չըկայ ջուր . մարդիկ և կենդանիք կը թուլնան տաքի և ծարսուի պատճառաւ . կոկորդիլուները կը պահուին տիղմի մէջ, իսկ օձերը չըդանելով և ոչմի տեղ կաթիլ մի ջուր, կը մանեն խորունկ երկրի մէջ և այնտեղ կը քնանան քանի մը ամիս մինչ կանցնի չոր ե-

զանակը : Շատ անդամ հովիները անդգուշու-  
շութեամբ կը վառեն չորացած խոտը , և տա-  
փաստանը քանի մի հարիւր մղոն տեղ կը  
պատի բոցավ . իսկ վախցած գոմէչները , ձիե-  
րը և ոչխարները թնդացնելով օդը իւրեանց  
մոնչիւնով և գոտիւնով , կը փախչին իւր-  
եանց հովիներու ձեռքին զիրենք աղատելու  
համար : Այս Ամերիկեան տափաստաններու  
հրդեհը սարսափելի և միանդամայն վեմ  
պատկեր մը կը ներկայացնէ մարդու աշաց :

## 2. ԲԱՐՁՐ ՏԵՂԵՐ

Բարձր տեղերն , իւրեանց դիրքով երեք  
տեսակ կ'լինին . տափարակ բարձրութիւններ,  
լեռնային կողմեր և հրաբուխներ : Տափա-  
րակ բարձրութեանց կամ լեռնատաշտերու վր-  
րայ մարդուս աշացը առաջ տեսարանը միա-  
տեսակ և ձանձրացուցիչ . իսկ ընդհակա-  
ռակին լեռնային կողմերը կը դրաւեն դմարդ-  
այլեայլ գեղեցիկ տեսարաններով : Լեռնային  
կողմերը , աշխարհները կամ կը բարձրանան  
խմբովին կամ կը ձգուին երկայն շարքով ( առ-  
նայ ) որոնք անցքերով կը բաժնուին ( հայոց , իւն ) :

Հրաբուխ կը կոչուին այն լեռները որոց  
մէջէն ժամանակ առ ժամանակ դուրս կը  
նետուին քարեր , աւաղ , մոխիր , և կը հոսի  
հրափրփուր : Ամեն հրաբուխներ միաձեւ

տեսք ունին . նոքա ձեւացուցած են մէկ  
կամ երկու կոնաձեւ , բրդաձեւ որոնք միմ-  
եանց վերայ ընկած են կարդաւ : Հրաբու-  
խը իւր կատարին վրայ կ'ունենայ բացուացք ,  
որ կը կոչուի բաժակ կամ տաշտ հրաբուխի :  
Այս տեսքը ունի հրաբուխը , երբ չէ սկսած  
ժայթքումն , իսկ բուն ժայթքման ժամանակ  
ուրիշ է տեսարանը : Բացուելին առաջ միշտ  
կը լինի երկրաշարժ երկրագնդիս որևիցէ մէկ  
տեղւոյն վրայ : Երկրաշարժի ժամանակ կը  
լսուի խուլ ձայն , սարսափելի ճայթումն .  
կարծես թէ երկրի մէջ թնդանօմներ ու  
հրացաններ կ'արձակուին կամ հրդեհը քարա-  
շէն տուներ այրելով կը լսփէ : 1812 ի երկ-  
րաշարժը , որ կործանեց ամբողջ Կըմիա քա-  
ղաքը Ամերիկայի մէջ , սկսաւ ընդերկրային  
հարուածով և երկրի շարժումով որով քաղքի  
բոլոր զանդակները հնչեցին . յետ առաջին  
հարուածին լսուեցաւ և երկրորդ հարուածը ,  
որով բոլոր հողն շարժեցաւ ծովու ալեաց նման-  
վերջապէս երրորդ . հարուածով ցընցեց և  
կործանեց ամբողջ քաղաքը որ թաղուեցաւ  
քարերու և դիակներու տակ . այս ամենը  
պատահեցաւ 20 երկվայրկեան ժամանակի մէջ :  
1785 թուականին մէկ ուրիշ երկրաշարժ ծ  
ըռպէի մէջ կործանեց ամբողջ Լիտան քա-  
ղաքը : Այս երկրաշարժը զգալի եղաւ ամ-

բողջ Եւրոպայի, Հիւտիսային Ա.փրիկէի մէջ և  
Հիւտիսային Ա.մերիկայի եղերքները. միով բա-  
նիւ բոլոր երկրագնդիս երեսներորդ մասի  
շախ տարածութեան վրայ : Ընդհանրապէս  
որ և իցէ հրարխային լերան տաշտը կը  
բացուի և կ'ակախ իւր գործոզութիւնը երկրա-  
շարժէն յետոյ : Նախ լեռնէն կ'ելլէ սիւնա-  
նըման գորշ ջրային գոլորչի, ժամանակ տո-  
ժամանակ լուսաւորուելով բոյէն : Գոլորչիէն  
կը ձեւանան ամպեր որ կը շրջապատեն հրա-  
բուխի բաժակն և կը ցրուեն կը տարածեն  
ամբողջ երկնից երեսը այնպէս որ արեւ ցի-  
տեսնուիր : Կայծակի փայլումն և որոտման  
ճայթումն կ'աւելցնեն մարդոց սարսափը :  
Շուտով այդ ամպերը կը փոխուին սաստիկ  
հեղեղանման անձրեւի, որ կը թափուի բաժակի  
մէջ, մինչդեռ բերանէն կը հոսի տաք ցեխ,  
կը թռչի մոխիր, աւազ, քարեր . այս յետին-  
ները այնպիսի սարսափելի ձայնիւ կը ճա-  
թըռտին որ կարծես թէ թնդանօթիւն ու  
հրացաններ կը պայթին . այս ձայներ լսելի  
կը լինին մինչ երկու մղոն հեռաւորութեամբ  
աւել : Ա.յսպիսի ժայթքմամբ էր որ իտալիոյ  
Առմմա հրաբուխը 79 թուականին ծածկեց  
երեք քաղաքներ, Հերէուլն, Արոքէն և Պօնտէն,  
և ասկէ ՚ի զատ ձեւացուց նոր հրաբուխ մը ,  
Վ.Եսոսք: Ա.յս հրաբուխի ժայթքումն կը հետաղո-

աէր դիտնական Հռովմայեցի Պիլինիոս մեծը, որ  
այդ աւել ծուխէն խեղդամահ եղաւ : Ա.յս  
ժայթքման մասին գրութիւններ մնացեր են նո-  
րա եղբօրորդի Պալմէն փոքրէն : Յետ ժայթք-  
ման բաժակէն կը հոսի գետանման հղափըր-  
փուր եւ երբեմն հրափրփուրը կը հոսի ոչ թէ  
զիթաւոր բաժակէն, այլ կը պատառէ իւր հա-  
մար ճեղք : Հրափրփուրի հոսումը չը պատա-  
հիր միշտ ժայթքմանէ յետոյ, այլ և երբեմն ա-  
ռաջ :

Հրաբուխները շատ օգտակար են երկրա-  
գընդիս, որովհետեւ եթէ նորա չը լինին, երկ-  
րիս կեղեւը շատ անդամ պիտի ճայթէր, պատճա-  
ռելով մեծ գժբախտութիւններ, բայց հրա-  
բուխներու միջոցաւ, երկրի մէջի հալուած  
նիւթերը կը դանեն իրենց համար աղատ ճա-  
նապարհ բաժակներէն դուրս ցայտելու : Ա-  
մենաշատ հրաբուխային լեռները Մեծ Ովկիա-  
նոսի շրջապատը կը գտնուին :

Լեռները մեծ նշանակութիւն ունին երկ-  
րագնդիս վրայ : Ա.յն տեղերէն կը հանեն ազ-  
նիւ մետաղներ՝ ոսկի, արծաթ, սպիտակ ար-  
ծաթ (բլազէն) որոցմէ դրամ, եկեղեցական  
զարդարանք, և այն կը շնեն . հասարակ  
մետաղներ՝ երկաթ, պղինձ, զինկ, անագ, ո-  
րոցմէ կը շնուռին կենաց համար ամենահար-  
կաւոր առարկայները . երկոյթը մանաւանդ-

այժմ շատ հարկաւոր է երկաթուղիներու շինութեան համար . հանքեր՝ կաւիճ , գաճ , քարածուխ . այս վերջինը , փայտէ ածուխի տեղ կը գործածուի գործարաններու և երկաթուղւոյ մեքենայից շարժման համար . թանկագին քարեր զարդարանքի համար , ինչպէս աղամանդ , տալազինն , մոլոշաքար կամ մալակիդ և հատաքար : Հատաքարը կը գործածուի արձաններու և շինութեանց համար :

Լեռները ներգործութիւն ունին երկրի կիմայի վրայ . նոքա կը պահպանեն աշխարհը տաք կամ ցուրտ քամիներէ : Լեռնոտ աշխարհները աւելի սիրելի են մարդոց այն պատճառաւ որ լերանց բարձրութենէն մարդուս աշաց առջեւ կը բացուին մեծ և ամեն կողմէ գեղեցիկ տեսարաններ , և կը կեդրոնացնեն իրենց լերանցամեջքի հովիտներու մէջ ամեն աշխարհի , այսինքն տագ , բարեխառն և ցուրտ երկիրներու բուսականութիւնը : Այսպիսի լեռնային աշխարհներու բնակիները միշտ խրեանց լեռները երեք գոտոյ կը բաժաննեն . երկրագործական կամ մշակելի , անտառային կամ արածատեղի և մերկ կամ ձիւնային : Մշակելի գոտին կ'սկսի լեռան տակէն և կը բարձրանայ ծովու երեսէ մինչ 1200 քայլ բարձրութեամբ . այս գոտոյ մէջ կը բուսնին ցորեն , մրացորեն , որթն , նարին ,

ձիթենի , նշենի և բամբակ . ամբողջ տարին գրեթէ միշտ կանաչ են ծառերը և ամենեւին ձը ձիւներ , միայն ձմեռ ատեն կ'անձրեւէ : Այս տաք գոտուոյ բնակիներուն զբաղմունքն է երկրագործութիւն , գինեգործութիւն , այգեպանութիւն : Երկրորդ գոտին վերոգըրեալ 1200 քայլ ծովու երեսի բարձրութենէն սկսեալ կը համնի մինչ 3000 քայլ բարձրութիւն : Այս անտառային գոտոյ մէջ հացաբոյսերէն կը մշակեն միայն հաճար , կամաց կամաց կ'աներեւութանայ որթն . ուրիշ այսպիսի քնքուշ՝ տաք գոտուոյ յատուկ՝ ծառերէն չըկան . փոքր ինչ երբ կը բարձրանաս , կը մտնես խիտ անտառներու մէջ և կամաց կամաց այս անտառներն ես կ'աներեւութանան և կուգան առաջդ միմիայն ծաղիկներ որք կ'անուանին Ալպեան բուսականութիւն : Այս ծաղիկները կը ծաղկին ձիւնը հալելէն յետոյ և շուտով կը թումին . սոցա մէջ նշանաւոր է Ալպեան վազդ անուանեալը : Աւելի յառաջանալով վերջապէս , կը համնիս կամաց կամաց ցուրտ գոտուոյ սահմանները և 3000 քայլէն վեր կը մրտնես մերկ և ձիւնով պատած լերանց գլուխը որ զուրկ է ամեն տեսակ բուսականութենէ և պատած է ամպով , մշտական ձիւնով և սառոյցով : Այս տեղ գաղաններ միայն կը գըտնուին , և երբեմն որսորդք կամ դիտնական-

ներ հետազոտութեան նպատակաւ կը բաձրա-  
նան մինչ յաւիտենական ձմեռնային գօտոյ  
կատարը :

Տ. ԱՂԲԻՒՐՆԵՐ, ԳԵՏԵՐ, ՀԻՃԵՐ ԵՒ ՃԱԶԻՃԱՆԵՐ

Գետերը կը ձեւանան կամ վտակներէ,  
ձիւներու հայուելէն , որք կը ժողովին լե-  
րանց դագաթներուն և տափարակ բարձրու-  
թեանց վրայ , կամ աղբիւրներէ , որ կ'նլեն  
գետնի մէջէն : Ինչպէս կը ձեւանան աղբիւր-  
ները և վտակները : Երկիրը կը ծծէ անձրեւի  
ջուրը որ կ'իջնէ երկրի խորը մինչև այն տեղ  
ուրկէ անդին չը կընար իւր ճամբան շարու-  
նակւլ : Այս տեղ ջուրը կը հաւաքուի և կը ը-  
կին հողէն դուրս կը ցայտէ իրը աղբիւր : Այն  
տեղը ուրկէ ջուրը դուրս կը ցայտէ այսպէս ,  
կը կոչուի Ա.Յ. Այսպիսի աղբիւրներէ կը ձե-  
ւանան վտակներ , վտակներէ գետակներ , և  
գետակներէ դետեր : Ջուրը իւր ակներուն  
մէջ քաղցրահամ է . երբեմն ալ հանքային համ  
մը կամ հոտ մը կ'ստանայ : Այս կը պատահի  
այն ժամանակ , երբ այդ ջուրերը երկրի ալ-  
ի այլ խառներէ անցած ժամանակ առկէ անկէ  
իրենց մէջ զանազան հանքեր կ'առնուն , ինչ-  
պէս իիր , երկաթ , ծծումք , և այլն : Այսպիսի  
ակները կամ ջուրերը կ'ըստին հանքային : Ա-  
ռոնք շատ օդակալար կը լինին հիւանդ մարդոց

առողջութեան համար , որք մասնաւորապէս  
կ'երթան հանքային աղբիւր գտնուած տե-  
ղեր , կը խմեն այդ ջուրէն , կը լուացուին  
անով և շատ անդամ կ'ստանան կատարեալ  
առողջութիւն : Հանքային ջուրեր շատ տեղեր  
կան . մասնաւորապէս շատ են Պոհեմիոյ և  
մեզ մօտ Պուրսայի մէջ : Այսպէս եթէ փո-  
րեմք երկիրը խորունկ , միշտ կրնամք համանի  
ջուրի երակի մը , այսինքն երկրի մէջ այնպիսէ  
տեղ մ' ուր կը հաւաքուի ջուրը : Առա վե-  
րայ հիմնուած են մեր ջրհորներու պեղման  
դրութիւնը : Ֆրանսացիք աւելի դիւրին միջոցը  
դտան ջուր հանելու : Կոքա մեծ գայլիկնիւ  
կը ծակեն երկիրը մինչև որ երեւայ կուտակ-  
ուած ջուրը . յետոյ այնտեղ կը ցցեն փայտ-  
եայ երկայն փող մը , որոյ մէջէն ջուրը շատ-  
րուանի պէս վեր կը զարնէ : Այսպիսի ջր-  
հորները կը կոչուին Ա.ք.ք.ս.եան , որովհետեւ ա-  
ռաջին անդամ այս կերպ ջրհորի բացումը տե-  
ղի ունեցաւ Փրանսայի Ա.րդուա դաւառը :  
Այսպիսի Ա.րդեսեան ջրհորներ մեր բնակած  
քաղաքի մէջ ալ շատ կան :

Գետերը երկրիս վերայ մեծ նշանակու-  
թիւն ունին . սոյա մօտ կը կառուցանեն գիւ-  
ղեր և քաղաքներ , որովհետեւ անուշ ջուրը  
պէտք է թէ՛ մարդոց , թէ՛ բոյսերու և թէ՛  
կենդանեաց : Գետերու միջոցաւ մարդիկ ա-

ւելի գիւրին կընան տեղափոխել իւրեանց ապահովները և հաղորդակցիլ միմիանց հետ : Երբ գեռ չը կային ճանապարհներ , երկաթուղիներ , գետերն հաղորդակցութեան ամենայարմար և գիւրին ճանապարհներն էին :

Եւրոպայի գետերը կ'ընթանան երկու միմեանց հակառակ կողմէ . Հիւսիսային Արեւմըտեան կողմէն կը հոսին հետեւեալ նշանաւոր նաւազնաց գետերը , Նեկո , Հիւսիսային Տվնո , Արեւմըտեան Տվնո , Նեմոն , Վելո , Հունո , Ան , Լուսո , Կարս : Իսկ Հարաւային Արեւելքն Ոտն , Պոտն , Տսիեր , և Վուլո :

Ամերիկեան գետերն ուզգեալ են միմիայն մի կողմն և կ'անցնին արեւելեան ընդարձակ դաշտերէ և են նաւազնաց , ինչպէս , Ասուր Լարինարինո , Միտիւբէ և Ա. Տառն : Ասիոյ գետերը կ'ընթանան զոյդ զոյդ , ինչպէս Չինաստանի Կառոյար և Դիենի գետերը , Հնդկաստանի Խարտում և Գանդի , Միջագետի Տէրէն և Եչեռոյ գետերը , և այլն :

Ա. Փրիկեան գետերը կը հոսին առանց նացեալ լերանց զառիվայրներէն և կը ձեւացընեն ահեղագոչ ջրվէժներու սահանք : Նորանաւազնաց են միմիայն իւրեանց բերնին մօտ : Ա. Փրիկեան գետերու մէջ բացառութիւն է Նեղոյ գետը որ թէւ ունի ջրվէժներ , բայց բաւական հեռու իւր գետաբերանէն յարմար է նաւազնացութեան :

Աւստրալիոյ գետերը բոլորովին անյարամար են նաւադնացութեան , որովհետեւ նոքապարբերաբար կը հոսին , այսինքն անձրեւային եղանակին կը լեցուին ջրով , իսկ տաք եղանակին կը չորնան և մանաւանդ շատ ժամանակ կը փոխեն իւրեանց անկողինը , այն է ընթացքի տեղը :

Լէները երեք տեսակ են . մէկ քանին գետերու ծնունդ կուտան և իրենց մէջ չեն ընդունիր ուրիշ գետեր . այսպիսի լիճերը իւրեանց տակէն բղխող ակներ ունին , որոց ջուրը խիստ պաղ կը լինի : Միւս տեսակ լիճերը միայն գետեր կ'ընդունին իւրեանց մէջ . ասոնց ջուրը ընդհանրապէս դառնահամ է , ինչպէս Կասպիան լիճը , որ երկրագնտիս ամենամեծ լիճն է և ունի 8400 քառակուսի մղնն տարածութիւն : Ա. յապիսի լիճերէ կը հանուի աղերրորդ կարգի լիճերը , որ ամենաշատն են , թէ՛ կ'ընդունին և թէ՛ դուրս կուտան գետեր : Սոքա այս կերպիւ կը ձեւանան . գետեր իւրեանց ընթացքի մէջ կը պատահին ցած տեղ մը , կը լեցնեն զայն և կը ձեւացնեն լիճը . լեցուած լծի աւելորդ ջուրը դուրս կը վաղէ և կուտայ սկիզբն նոր գետի մը . սա ևս կը հոսի մինչև որ գտնայ ուրիշ փոս մը կամ գետ մը և կամ ծով մ' ուր կը թափուի :

Ամենաբազմաթիւ և մեծ լիճերը կը գըա-

նուին երկրագնտիս երկու տեղերը. Հիւսիսայն Արեւելքան Եւրոպիոյ և Հիւսիսային Արեւելքան Ամերիկայի մէջ:

Ճաճինւեր. Յամաքի վերայ կը գտնուին փոսեր, որոց յատակը կը լինի կաւային. անձրեւի ջուրը թափուելով այդ փոսերու մէջ և ջուրը մնալով այնտեղ երկար ժամանակ, կը ձեւանայ ճահճը: Բարեխառն երկիրներուն յատուկ են Կիւտիստայն ճահճները, իսկ ցուրտ երկիրներուն՝ ճախճախուտ ճահճները:

#### 4. ԿՂԶԻՆԵՐ

Յամաքի մեծ մասերն ուսանք. այժմ Նկարագրեմք փոքր մասերը, այսինքն կամ ները: Ասոնք երեք տեսակ են. Եւպատունեան, Վալենտինեան (Հրաբուխային), և Բուստային:

Եւպատունեան կղզիներու ձեւացումը ջուրէ պատճառած լինելով, այսպէս անուանուած են, որովհետեւ հին Յունաց ջրոյ աստուածն էր Նեպոն: Նեպտոնեան կղզիներն երեք տեսակ են. ոմանք՝ նախապէս նեղ պարանոցով միացած լինելով մեծ ցամաքի հետ՝ ծովերու ուժով զատուած են և ծովու մէջ առանձնացած: Այս կղզիք մեծաւ մասամբ բաւական ընդարձակ են, ունին գծագրական երկայն ձեւ, և փոքրիկ ջրանցքով կամնեղուցով մը մթայն բաժանուած են մեծ ցամաքէն:

Դոյցամնէ ամենամեծ երն են. Մէջն Բէքունէ, Խունարա, Սէնտէ, Գէւանո, Եւրոպիոյ մէջ. Ֆէնունան, Սնոր և Ճաբունան կղզիք՝ Ասիոյ մէջ. Մասունչուտը՝ Ափրիկէի մէջ. Քուսու և Եսանցիւն կղզիք՝ Ամերիկայի մէջ. Նոր-Կունչնէն և Վանդինէննան երէն՝ Ասոտրափիոյ մէջ: Ուշիւ կղզիներ կը ձեւանան հետեւեալ կերպիւ. գետերը իւրեանց հոսանքի հետ գետաբերանը կը թափեն տիղբ, աւազ, քարեր եւ բուսական մնացորդներ, եւ որովհետեւ այստեղ հոսանքը կը դադարի, այս ամեն իրերը գետաբերանին մօտ կը դիզուին, հետզետէ կ'աւելնան հոսանքի բերած նորանոր կոյտերով, որով և կը ձեւանան կըղզիներ, որոնք գետաբերանը քանի մը ճիւղերա կը բաժնեն: Քանի մը գետերու բերանը կը բաժանուին շատ ճիւղերու, այնպէս որ հարիւրաւոր կղզիներ կը ձեւանան, որոց վերայ կը բուսնին խիտ անտառներ և որոց մէջ կը բնակին վայրենի դազաններ և օձեր, այսպիսի կղզիներու վերայ երբեմն կը չինուին քաղաքներ և գչւղեր: Գետաբերանի մը ամբողջ տարածութիւնը իւր բոլոր ճիւղերով միամեղ կը կոչուի Տեւա, որովհետեւ կ'ունենայ յունական  $\Delta$  տեղա տառին նմանութիւնը: Ամենամեծ տեղաները կը կազմեն Ֆիստիրի, Խնդոս, Գանդէս և Նեղոս գետերը:

Նեպտոնեան կղզիներու կարգը կը դաս-

ուի նաև նրէաց շնչայն, որք ցամաքի լեռանց շըդ-  
թայներու շարտւնակութիւնը կը կազմեն ծո-  
վերու ներքեւ և խրեանց կատարները ջուրի  
երեսէն բարձրացնելով կը մինին կարդ կամ  
շղթայ կղզեաց : Սոքա միշտ լեռանց շղթայի  
ուղղութեամբ ձգուած են և կը ձեւայնեն  
բնական շարտւնակութիւնը այս վերջիններուն,  
ինչպէս են Քուրէէան և Ալեւրէան կղզիներն  
Ամիոյ մէջ :

Վ. Հինեան (Հրաբուխային) կղզիները կը  
ձեւանան երկրիս ներքին կրակի ներդործա-  
կան գործողութեամբ : Նոքա այսպէս կոչ-  
ուած են նախնեաց Վ. Հինեան կրակի աստուծոյ  
անուամբ : Հրաբխային կղզիները կ'երեւան  
կամ երկրաշարժէ յետոյ կամ ծովային հրա-  
բուխի պայթելէն կամ բացուելէն յետոյ :

Առաջին կերպիւ պատահած ժամանակ  
ծովի յատակը կը բարձրանայ այնչափ բարձր  
որ նորա մի մասը ջուրին երեսը կը բացուի  
և կը մինի կղզի ։ իսկ երկրորդ կերպը կը պա-  
տահի այնատեն, երբ մշտական ծովու տակի  
հրաբուխը բացուելով կը մեծնայ, կը բարձ-  
րանայ այնչափ որ վերջապէս կղզւոյ նման  
կ'երեւայ ծովու վերայ : Հրաբխային կղզինե-  
րու ձեւը ընդհանրապէս կլոր է . սոքա գըլ-  
խաւոր ցամաքէն հեռու կը գտնուին, սա-  
կաւ պղղաբեր են և այդ պատճառաւ ամե-

նեւին օդտակարութիւն չունին մարդոց հա-  
մար, ինչպէս Նեպտոնեան կղզիները : Այս  
կղզեաց կարգէն են Ա. վրիկեան կղզիներէն  
շատերը, ինչպէս Քահարեան, Մարտէա, Ա. Հեղին-  
կղզիք . նոյնպէս Ա. առաջական, Սանդուկչւ, Նոր-  
Զելանդի կղզիները, ևայլն :

Բաստայն կղզիներու համար շնորհակալ  
լինելու է ծովային փոքրիկ կենդանեաց, պո-  
ղպասներու (Ըստածօնի), մշտական աշխատու-  
թեանց : Պողիպոտն է գնդասեղի մը գլխէն  
փոքր լորձունքանման մանր կենդանի . տես-  
քով նման է փամիկուշտի և կարող է ձգուիլ և  
ամիկոփուիլ . պողիպոտի վերի բացուածքը որ  
իբր բերան կը ծառայէ, պատած է քանի մի  
հատ մազով, որով կերակուր կ'օրսայ : Պո-  
ղիպոտը ո՞չ կըլսէ և ո՞չ կըտեսնէ և կը բը-  
նակի ոչ շատ խորունկ ծովու մէջ և կը կե-  
րակրուի ջրածին որդունքներով (այնպիսի կեն-  
դանիներով որ միայն խոշորացուցի տակ նշմա-  
րելի են) : Պողիպոտի գլխաւոր յատկութիւնը  
այն կարողութիւնն է որով կրնայ կերակու-  
րէն կիրը զատել : Այդ պատճառաւ նախ  
պողիպոտի ներաը կը լեցուի կիրով, և երբ  
բոլորովին կը լեցուի, կենդանին կը մեռնի .  
այս տեսքին մէջ կը կոչուի Բաստա . իսկ երկ-  
րորդ, կիրի օգնութեամբ պողիպոտը կը փակ-  
չի ջուրի տակ ալպառաժներուն և կամ հրա-

շունչ լեբանց բաժակներու չորս բոլորը : Պո-  
դիպոտները այսպէս կը բազմապատկին, փակ-  
չելով ապառաժներուն կը ծնանին անթիւ նոր  
պողիպոտներ : Այսպէս մի խնաւոր պողիպոտ-  
ները կը բնակին կամ կ'ապրին ո՛չ առանձին +  
այլ փակչած են միմեանց և ամենը միասին կը  
ձեւացնեն իբր մի մարմին որ կը կերակրուի  
շատ մի բերաններով և ստամոքմներով :

Պողիպոտներու այս կերպ կուտակումը  
շատ տարօրինակ կերպով երեւան կուգայ .  
անոնք երբեմն կը նմանին ծառերու, երբեմն  
թուփերու և երբեմն մամուռի և որդիշ շատ  
ձեւերու : Վերէն նայելով ծովուներու, մեղ  
կը ներկայանայ սքանչելի և դիւժական պար-  
տէղ մը լեցուն երփներանդ դոյներով : Աս-  
տիճանարար մեծնալով կենդանին, վարի կող-  
մը հետզհետէ կը մեռնի, մինչ վերինը կը շա-  
րունակէ ապրիլ և բազմանալ, և մեծացնել  
սկսուած շէնքը : Համնելով ծովու երեսը,  
պողիպոտներու շինուածքները կը ձեւացնեն  
երեք տեսակ կղզիներ (ո՞րոնք են և ի՞նչ ա-  
նուն ունին) :

### 15. ԾՈՎ

#### 1. ՅԱՏԿՈՒԹԻՒՆՔ ԾՈՎՈՒ

Ծովը մարդուս շատ օդուտ կուտայ թէ՝

իւր արդիւնաբերութեամբ և թէ՛ իւր ներ-  
գործութեամբ՝ օդի , վաճառականութեան ,  
մարդուս կենաց և մինչև անդամ սորա բը-  
նաւորութեան վերայ : Առանց ծովու , մար-  
դիկ այսչափ շուտով չըպիտի կարողանային  
ծանօթանալ միմեանց հետ և յառաջադիմել  
թէ՛ հարստութեան և թէ՛ լուսաւորութեան  
մէջ : Առած եղած է թէ լեռները գ'մարդիկ  
կը բաժնեն , իսկ ծովերը կը միացնեն զա-  
նոնք : Միենոյն առագաստանաւը կամ շոգե-  
նաւը ճանապարհորդել սկսելով մէկ ծովէ ,  
կարող է ամբողջ երկրագունդիս շուրջը ճանա-  
պարհորդել , որովհետեւ բոլոր ծովերը կամ  
խառնուած կամ նեղուցով միացած են միմ-  
եանց հետ : Ծովային ճանապարհորդութիւն-  
ներ կարելի է ընել թէ՛ առագաստանաւով և  
թէ՛ շոգենաւով :

Ահա ծովու այլ և այլ երեւոյթները և  
յատկութիւնները .

Մանեացովնէն և գեղագուստնէն . — Ծովերը  
մակնթայութեան ժամանակ կը բարձրանան  
և մինչև անդամ կը ծածկեն եղերքները , ե-  
թէ սորա ցած են . իսկ տեղատուութեան  
ժամանակ նորա կը քաշուին և եղերքները  
ջուրէն կը զատեն : Մակնթայութիւն և  
տեղատուութիւն ամեն վեց ժամը անդամ մը  
այսինքն օրը երկու անդամ տեղի կ'ունենայ-

Մի քանի աշխատասէր ժողովուրդներ որք կը  
բնակին այդ եզերքներուն վրայ , ինչպէս Հո-  
լանտացիք , իւրեանց երկիրը ծովերու մակըն-  
թացութենէն կը պաշտպանեն թումբեր շինե-  
լով : Մակնթացութիւնը և տեղատուութիւնը  
նկատելի են միայն բաց ծովերու վերայ , իսկ  
ներքին ծովերու վերայ դրեթէ աննկատելի  
կը մնան : Ներքին ծովեր կը կոչուին այնպիսի  
ծովեր որք լը լապատուած են ցամաքաւ , և  
միայն նեղուցով կամ ջրանցքով կը միանան մեծ  
ծովերու հետ , ինչպէս Մամառան , Աւաւ Մէջէրէ-  
տէն ծովերը : Թէև մակնթացութիւնը և տե-  
ղատուութիւնը ժամանակաւոր են , բայց մար-  
դիկ գիտցեր են օգտուիլ այդ երևոյթներէն-  
մակնթացութեան ժամանակ կը կարողանան  
նաւերը մտնել ամենածանծաղ նաւահան-  
գիստներու մէջ : Նատ տեղեր բնակիները  
ծովերը կը փորեն բաւականին մեծ խորու-  
թիւններ , որք կը լեցուին մակնթացութեան  
ժամանակ , և երդ կը մի տեղատուութիւն , խո-  
րութեանց մէջի ջուրը գոլորշիանալով , տակը  
կը նստի ծովային աղը , որ բաւական շահաւ-  
որ արտադրաւթիւն մ' է այդպիսի եղերային  
բնակչաց համար : Բաց աստի , տեղատուութենէ  
յետոյ եզերաց վրայ կը մնան խեցի , սաթ ,  
և ուրիշ այսպիսի ծովային արդիւնաբերութիւն-  
ներ , որք նոյնպէս շահ կ'արտադրեն բնակչաց :

Ծովու էսնը .— Ընդհանրապէս ծովու գոյ-  
նը երկնից գոյնն է որ իւր մէջ կը ցոլանայ . ե-  
թէ երկնը յատակ է , չըկան ամպեր , ծովս ևս  
կապոյտ գոյն ունի , իսկ ալեկոծութեան ժա-  
մանակ ծովը թուխ գոր գոյն կ'առնոււ : Ծովու  
յատակի յատկութիւնն ունի նոյնպէս մեծ ներ-  
գործութիւն ջուրի գոյնի վրայ . ծովու խորու-  
թիւնն որչափ նուազի , այնչափ կապոյտ գոյնը  
կը փոխուի շատ անգամ սպիտականման գոյ-  
նի , գեղնագոյնի կամ կանաչի : Ծովու գոյնը  
ունի ուրիշ պատճառներ ևս , ինչպէս Կարմիր  
ծովը իւր գոյնը կ'առնոււ իւր մէջ ապրողշատ  
մի կարմրագոյն մանր կենդանիներէ , նոյն-  
պէս և մանր ջրային կարմրագոյն բոյսերէ :  
Երբեմն կը պատահի որ ծովը յայտնի տարա-  
ծութեամբ տեղ կ'ստանայ առանձին գոյն ,  
ինչպէս մէկ ճանապարհորդ կը պատմէ որ նա  
իւր նաւագնացութեան միջոցին Մեծ Ովկիա-  
նոսի վերայ նկատեր է բաւականին լաւ և եր-  
կայն ակօս , որ կարծես ծածկուած էր խոտի  
կտորներով . ուրիշ ճանապարհորդ մը նոյն  
ծովու վերայ տեսեր է ջրի ակօս մը կաթնա-  
գետի նման : Այս երկու դէմքերու միջոցին  
ճանապարհորդք խոշորացոյցով (ի՞նչ է) դիտե-  
լով ջուրը , տեսեր են որ անոր այդ մամնաւոր  
գոյնը պատճառած էր շատ մանրկեկ կենդա-  
նիներէ , որոնք այդ ժամանակ ծովուն երկու

կը լողային։ Այսպէս, ծովու գոյնը երեք պատշառէ է կախեալ երկնքի ցոլացումէն, ծովուն յատակի յտութենէն և մանրկեկ կենդանիներէ և մինչև անգամ բոյսերէ որ կը բնակին ծովու մէջ։

Հաջ. — Ծովու ջուրի համը գառնաղի է և այդ պատճառաւ անպէտք է տնային գործածութեան համար, մարդուս վերայ կը ներդործէ իրը լուծողական և այդ պատճառաւ նաւաստիները կը խմեն անկէ իրենց հիւանդութեան ժամանակ։ Ծովու ջուրի մէջ կարող են ապրիլ գետի ձուկներ և ընդհակառակն ծովային ձկանց քանի մը տեսակը կը մտնեն գետաբերան և այդտեղ կ'ածեն իւրեանց ձկնիթը (հաւկիթը, քափեարը)։ Ծովի ջուրէն մարդիկ կը հանեն աղ, ցուրտ երկիրներու ընակիչները ջուրը պաղեցնելով, սառեցնելով, իսկ տաք երկիրներու ընակիչները ջրոյ գոլորշիացմամբ։ Վերջին ժամանակներս հնարուեցաւ գործիք որով կարելի է ծովային ջուրը բաժնել աղային մասերէ և այսպէս մաքրուած ջուրը շատ ժամանակ կարելի է գործածել փոխանակ գետի ջրոյ։ Այսպէս, առ երկիւղ չըկայ ծովագնացներու համար, եթէ փոթորկի կամ ալեկոծութեան պատճառաւ չըկրնան ժամանակին համնիլ նաւահամնդիսամը, որովհետեւ ջրի պակասութեան միջոցին

միշտ կրնան պատրաստել քաղցր ջուր, բաւական է որ ունենան ջրոյ մաքրիչ գործիքը։

Թագանցիւննեան. — Քանի մը տեղեք ծովութափանցիկութիւնն այն աստիճան է որ կարելի է մինչ Ովլիանոսի յատակը տեսնել։ Եթէ, զորօինակ, Անդիլեան կղզիներու մօտ նաւորդես, կը կարծես թէ նաւը կախուածէ օգին մէջ և խնդր թուշունի պէս կը թուշիս ամպերու տակէն, մինչդեռ մօտէդ կը սահին կ'երթան տափարակ տեղեր, գաշտեր, բըլուներ կամ բոլորովին մերկ և կամ ծածկուած բազմերանգ բոյսերով և թուփերով, շատ անդամ կանաչ գոյնը փոխուելով գեղնի և կամ կարմիրի։ Աւելի հիանալի կ'երեայ ընդծովային բուսականութիւնն իւր մէջ ապրող կենդանիներովը, ձկներովը, ամենազեղցիկ տեսակներէն։ ասոնք երբեմն մինակ, երբեմն խմբովին կը թափառին մեծամեծ քարերու մէտեղ, կամ կ'աներեւութեանան խիտ բոյսերու մէջ։ իսկ մաքուր աւազային յատակին վրայ հազարաւոր տեսակ որդներ տակնու վրայ կը լինին, մինչդեռ խեցգետինները աղահութեամբ նոցա վերայ կը յարձակին և զանոնք յափառակելով կը քաշուին քարերու տակ։

Աւելի, Փողոքէ, Համան. — Լաւ եղանակին ծովը հանդարտ է և խաղաղ։ փոքրիկ քամին միայն նորա հայելանման երեսը սակաւ մի կը շարժէ։ բայց ուրան քամին կը սաստկանայ և

Երկարատեւ կը լինի, այնչափ և ալիքները կը շատանան ծովու վրայ : Երբեմն ալիքները 18 կանգուն բարձրութեան կը հասնին . այն ժամանակ ծովու վերայ փոթորիկ կը լինի : Ովկիանոսներու մէջ կայ նոյնպէս հոսած, ինչպէս գետերու մէջ, միայն այն տարբերութեամբ որ գետերու հոսանաց եղերքները ցամաքէ են, իսկ Ովկիանոսինը նոյն ինքն ջուրը : Գլխաւոր հոսանքը կը կոչուի հասարակածային հոսանք, հասարակածի մօտէն անցնելուն պատճառաւ : Հասարակածային հոսանքը կ'արագացնէ նաւագնացութիւնը Ա.դլանտեան Ովկիանոսի վրայ Ա.փրիկէն Ա.մերիկա, և Մեծ Ովկիանոսի վրայ Ա.մերիկայէն Ա.սիա : Ուրեմն հասարակածային հոսանքը բոլորովին հակառակ ուղղութեամբ կը հոսէ երկրագնդիս թաւալման հետ. երկրագունտը կը թաւալի Ա.զեւմուտքէն դէպ Ա.զեւելքը, իսկ հասարակածային հոսանքը Ա.րեւելքէն դէպ Ա.զեւմուտք :

Ծովս շոշէն .-Ա.սատ հիանալի է դիշերը կամ մութ օրեր, երբ երկնից երեսը պատած է խիտ ամպերով : Ծովու շողիւն կը պատահի, երբ նաւը պատառելով ալիքները՝ եւրյետեւէն կը թողու փայլող կամ շողողիւն ակօս, կայծակի նման: Շողիւն կը պատճառի նաև ջուրի մէջ շարժող լուսաւոր կէտերէ, որոնք կայծերու նման կը շողան : Երբեմն ալ

կը տեսնես որ ծովու բաւական մեծ տարածութիւն մը կը շողայ : Եթէ գաւաթ մը այդ շողացող ջուրէն առնեմք, նորա մէջ իրապէս կը նկատեմք կայծեր, երբ գաւաթի ջուրը շարժեմք . եթէ քամեմք ջուրը քէթէնի լաթով, այլ ևս ջուրը չը շողողար, այլ շողչողիւն հետքեր մնացած կը տեսնեմք լաթի վրայ : Եւ եթէ սոյա վրայ նայիմք խոչըրացոյցով, կը տեսնեմք որ այս փայլող, ըստ արձակող կէտերը չեն այլ ինչ եթէ ոչ ամենամար լորձունքային կենդանիներ : Եւ ահա այսպէս ջուրը ինքն ըստ ինքեան չը շողար, այլ իւր մէջ գտնուած լորձունքային կենդանիներն են ( պողիսոս, ջրածէն որդունք ) որ իւրեանց շարժման միջոցին լոյս արձակելու յատկութիւնը ունին մեր ամառնային կայծութիկներու նման : Փոքը ծովերու ջրոյ շողիւնի պատճառներն են մէջը մնայած սատկած և փտած կենդանիները և բոյսերը, որոնք ըստ կ'արձակեն ինչպէս լոյս կ'արձակէ փտած կամ նեխացած ծառի կտոր մը, երբ զ'այն մոցունեմք մութ սենեկի մը մէջ : Այս յատկութիւնն ունի Ա.զովի ծովու մի մասը :

Փակէն . -Ա.յս ծովային երեւոյթը այսպէս կը պատահի . սեաւ ամպը ձագարանման կը կախուի դէպի ծովը, մինչ միենոյն ժամանակ ծովային ալիքներն ալ անտեսանելի ոյժէ

մկեալ նոյնպէս ձագարանման վեր կը բարձրանան դէպի ամսըր : Եղիու ձագարները կամաց կամաց կը միանան և կը ձեւացնեն գորշ սիւն որոյ կատարը ամպերու մէջ է թաղուած, իսկ վարի ծայրը ծովու մէջ : Այդ սիւնը կը սկսի ինքն իւր վերայ դառնալ և արագ ընթանալ տեղ փոխելով : Քանի որ մարդիկ չգիտէին թնդանօժի հարուածով թամիուր սնչացնել, վտանգներ անպակաս էին . շատ անդամ նաւակներ հանդերձ նաւազով դէպ ՚ի վեր կը քաշուէին և յաճախ նաւեր կը կործանէին : Թամիոները ցամաքի վրայ ևս կը պատահին, մանաւանդ աւազոտ տեղեր . միայն թէ այստեղ փոխանակ ջրոյ, կը բարձրանան աւազէ սիւներ, որք ճանապարհի վրայ կը քանդեն ամեն բան, արմատախիլ կ'ընեն ծառեր, կը խորտակին տան ծածկոցներ, իրենց հետ դէպ ՚ի վեր բարձրացնելով մարդիկ և կենդանիներ :

Պրցու կոմ յոբան + . - Յորձանքը կը պատահի երկու միմիանց հակառակ հոսանքներու հանդիպմամբ, որով ձագարածեւ կ'սկսի դառնալ ջուրը, այն տեղ ուր հոսանքները միմիանց կը քսուին : Կը պատահի երբեմն որ նաւակ մ' այս յորձանքի, պտոյտի, մէջ ընկնելով, երկայն ժամանակ կը դառնայ միենայն տեղը և երբէ մն բուրսովին ներս կը քաշուի ծովուն

խորը : Փոքը ժամանակէ մը յետոյ, յորձանքը վեր կը նետէ նաւուն կտորտուանքը և կամնաւորդաց անշունչ գիտակները : Մասնաւորապէս վտանգաւոր են Ս.մերիկայի և Ա.վրիկէի հարաւային ծայրերու յորձանքները. ինչպէս, Հարաւային Ս.մերիկայի Հղոնա հրուանդանի մօտ և հարաւային Ա.վրիկէի Բարեյուսոյ գլխի մօտ գտնուած յորձանքները, ուր միմիանց կը հանդպին երկու հակառակ հոսանքներ : Այս յորձանքներու պատճառաւ այս տեղեր սոէպ կը պատահի նաւերու խորտակումն :

## 2. ՆՈՎԱՅԻՆ ԿԵՆԴԱՆԻՔ

1. Ծավային կենդանեաց նշանաւորներն են . կէտը, վիշապաձուկը, գլիֆինը, փոկը և ջրափիղը : Կէտը կը գտնուի Սառուցեալ Ովկիանոսի մէջ : Մեծ կէտը երբեմն կը հասնի 30 քայլ երկայնութեան և 15 քայլ լայնութեան, իսկ ծանրութիւնը աւելի քան 465 օխայի : Կէտի մէջքը ծածկուած է սեւաւ գերբուկ կաշիով, իսկ մարմնոյն վարի մասը բաղիտակ և փայլուն է: Կ'նդանւոյն վիթխարբ գլուխը, որ համեմատաբար մարմնոյն երրարդ մասը կը կազմէ, ունի այնչափ մեծ բերան որնոր մէջ կարող է տեղաւորուիլ մի նաւակ քանի

մը մարդով, ընդհակառակը որկորն այնչափ փոքր է որ չըկրնար կլանել մինչև անգամ փոքրը ձուկերը: Կէտի գլխաւոր թշնամին մարդն է: Շատ եզերարնակ ժողովուրդներ, ինչպէս Անգղիացիք, Ֆրանսացիք, Հոլանտացիք և ուրիներ, հարիւրաւոր նաւեր կը զրկեն կէտ որսալու: Կէտ որսալու համար կը գործածուի ամենահասարակ երեքժանիք գործիքը: Երբ որսորդները նաւէն ծովուն երեսը կը տեսնեն կէտը, կիթնեն նաւակ և կը մօտենան. իրենց մէ ամենէն որատեսը և յաջողակը խոկոյն կը նետէ երեքժանին, միշտ աշխատելով որ հարուածը կենդանւոյն քնքոյշ տեղին հանդպի. այն ատեն նաւակով կ'աշխատին շուտով հեռանալ մի կողմ, միշտ 'ի ձեռին պահելով պարանը, որոյ մէկ ծայրը ամրացած է երեքժանիքին վրայ: Վիրաւորեալ կէտը խոկոյն կը խորասուզի ծովուն մէջ. միայն կ'երեւայ նորա պոչը, որով այնպիսի սաստիկ հարուածներ կուտայ ջուրին, որով հանած ձայնը լընդամոթի որոտաման կը նմանի և լսելի կը լինի մինչ մէկ մղոն հեռաւորութենէ: 'Ի հարկէ օդ շնչելու ստիպեալ, կէտը կրկին կը բարձրանայ ծովուն երեսը, որսորդները կրկին կը հարուածեն զայն երեքժանիքով և այսպէս կը շարունակեն մինչև որ սպաննեն. այն ժամանակ որսորդները կը քաշն կը մօտեցնեն զայն նաւուն և մի հարա-

հնար մեքենայով վեր կը բարձրացնեն զայն և կ'սկսին կտրատել: Բաժանելով ոսկորները, եղը, ճարպը, դիակի մնացորդը կամ կը թողուն ծովեզը կամ կը նետեն ծովու մէջ ուր և կը ժողուուին պատրաստի դիշակեր թռչնոց երամներն :

Վիշապաձուկը կը գտնուի ամեն ծովերու մէջ, բաց ի շատ ցուրտ ծովերէ: Նա մի քիչ փոքր է կէտէն, բայց նորա գլուխը աւելի վիթխարի է և աւելի անհամեմատ է մարմնոյն մնացեալ մասին հետ: Վիշապաձուկերն կը զանազանին կէտերէն այնու որ սոքա ունին ատամներ և միշտ կը լողան խմբովին, երբեմն թուով մինչ 20, մինչդեռ կէտը կը սիրէ առանձնութիւն: Բաց ի ճարպէ, իւղէ, վիշապաձուկը կուտայ և քերճուեթէ լուուած տեսակ մը ճարպ որ իւր գլխայն մէջ կը գտնուի և որմէ զեղագործները կը չինեն սպեզանի:

Պլիինի յատուկ ապրելու տեղերն են Աղլանտեան Ովկիանոսը և նորա մասերը: Պլիինը ամենափոքր տեսակն է կէտատեսակ կամ ձուկնատեսակ կաթնակեր կենդանեաց մէջ. հազիւ երեք քայլ երկայնութիւն կ'ունենայ: Պլիիններու խումբեր ամեն նաւերու միշտ կ'ընկերակցին:

Փոկը և ջրափիղը ծովային գազանաց միևնոյն տեսակին կը պատկանին: Պլուխնին

նման է փոքր շան կամ կատուի : Փոկերը ամեն ծովերու մէջ կը գտնուին , բացի տաք դօտոյ ծովերէն : Սորա շատ արագ կը լոզան , իսկ ցամաքի վրայ դրեթէ կը սողան : Զրաֆիղը փոքր ինչ մեծ է փոկէն : Փոկէն շատ կ'օգտուին հիւսիսային կղզեաց և եզերաց բնակիչները . միուը կ'ուտեն , իւղը լուսաւորութեան կը գործածեն , կաշով նաւակները և խրճիթները կը ծածկեն , մորթէն հագուստ կը շննեն , ջիղերէն՝ գերձան , ոսկորներէն՝ ասեղ : Փոկի վաճառականութեամբ կ'զբաղին այլ և այլ լուսաւորեալ Եւրոպայիք:

2. Ծովային թռչնոց մէջ մանաւանդ շատ են բաղերու տեսակը , որոցմէ ոմանք կը բընակին ամառը ցուրտ կողմերը , իսկ ձմեռը տաք ծովերը կը թռչին . ուրիշներ ալ ընդհակառակն մշտակաց բնակութիւն ունին ցուրտ երկիրներու կղզիներն և եզերքներն :

3. Երկակենցաղ կենդանեաց կարգէն է և կրիան : Սորա կազմուածքը շատ տարօրինակ է . բոլոր մարմինը ծածկուած է ոսկորով . միայն գլուխը , ոսքերը և պոչը կը հանէ զուրս , երբ քայլել կամ լափել ուղէ : Ոսկորէ պատեանն է իր միակ պաշտպանութեան զինքը՝ ուրիշ կենդանեաց յարձակմանց դէմ : Կրիաները կը բնակին տաք կիմայի ծովերու մէջ , կը կերակրուին ծովային փոքր կհնդանիներով

և խոտերով : Անոր ոսկորէն կը շինուի զանազան զարդեր , սանտր , իսկ միսէն կը պատրաստուի ապուր որ ամենահամելզ կերակուրը կը համարուի Անդ դիացւոց համար :

4. Չուկներն են ամենաբազմաթիւը և կը գտնուին աշխարհի ամեն ծովերու մէջ : Ասոնցմով կը կերակրուին երկրագնդիս բնակչաց գրեթէ երեսներորդ մասը : Գիտնական բնագէտը մինչև ցարդ դտած են 8000 տեսակ ձկներ : Սոցա մէջ առաջին տեզը կը բռնէ տառեխը (րինկա պալրղը) որ շատ մեծ օդուտ կուտայ մարդոց , ամեն ծովերու մէջ կը գտնուի և այնչափ բազմածին է և այնչափ առատ որ շատ անգամ որսորդք իրենց նաւերը խիստ ծանրաբեռնելով , վտանդէ ազատելու համար կ'ստիպուին կէսը ծովը թափել : Ոչ մէկ ժողովուրդ չգիտէ այնպէս վարպետ կերպիւ . աղել այդ ձուկը , որչափ Հոլանտացիք և Շողլանտացիք : Տառեխի տեսակին կը պատկանի և աղկեր ձուկը (սարտէլա պալրղը) , որոյ որսորդութիւնը գլխաւորապէս Փրամացւոց և Խտալացւոց ձեռքն է Միջերկրական ծովու մէջ : Նատ համեղ կը պատրաստուին ձիթենիի իւղի մէջ և մանր թիթեղեայ տուփերու մէջ պատսպարուած , կը հանուին ի վաճառ : Յետոյ կուգայ ձողաձուկն որ շատ որկրամու կենդանի է . երկայնութիւնը կը

ինի մինչ Զ կանդուն , ծանրութիւնը 6—7  
օխա : Այս ձկան ամենանշանաւոր որսալու  
տեղն է Գեղմանական ծովը , ուր մի միայն  
Սնգդիան տարեկան 2000 նաւ կը դրկէ որ-  
սալու անկէ : Չողաձուկն կուտուփ թէ՛ եփած  
և թէ աղած և ամենասիրելի կերակուրը  
կը համարուի հիւսիսային եզերաց բնակչաց  
համար : Չողաձուկը կուտայ իւղ և սօսինձ :  
Չողաձկան իւղը շատ օդտակար է տղայոց  
համար խուլական հիւսնդութեանց դէմ :

5. Բաց ի ծովային կենդանիներէ և ձք-  
ներէ , ովկիանանոներու մէջ կը բնակին միլիո-  
նաւոր խեցետիններ , թուլատարդներ , պո-  
ղպատճներ , մանրադիտական կենդանիներ :  
Թուլատարդները չունին ոսկոր և մեծաւ մա-  
սամբ կը բնակին խեցի անուանեալ կրային  
պատճեանի մէջ , ինչպէս ոստրէն և մարդարտեայ  
խեցին :

### 3. ՆԿԱՐԾԳԻՐ ՈՎԿԻԱՆՈՍԱՅ ԵՒ ՆՈՅԱ ՄԱՍԱՆՑ

1. Հիւսիսային Առաւելալու շատ առաջ  
յայտնի էր Եւրոպացւոց քան թէ Հարուսային  
Առաւելալ Ուշտանոսը : Ասկէ 1000 տարի առաջ  
յանդուղն ծովագնաց Նորմանները դտան իռ-  
լանտա կղզին և այնտեղ հաստատեցին գաղ-

թականութիւն : Նորմաններէ յետոյ Ռուսը  
տիրելով Հիւսիսային Ովկիանոսի ափանց , կը  
նաւազէի եխն այդ ծովու մէջ , ծովային կեն-  
դանիներ որսացու համար : Արևմտեան Եւ-  
րոպան ծանօթ ոյտու Սառուցեալ Ովկիանոսին  
Անդգիացւոց և Հոլանտացւոց ձեռօք , սոքա  
կը բարձային այս Ովկիանոսի միջոցաւ մի-  
կարճ ճանապարհ գտնել Եւրոպայէն Հնդ-  
կաստան նաւարկելու համար :

Հիւսիսային Ովկիանոսի ծովագնացնե-  
րու մէջ առաջին տեղը կը բռնէ Ֆրանքին :  
Ֆրանքին երեք ճանապարհորդութեան ձեռ-  
նարկեց : Առաջին ճանապարհորդութեան մի-  
ջոցին նա կամեցաւ համնիլ մինչև հիւսիսա-  
յին բեւեռը , բայց Սբեցվերէն մօտ սարսափե-  
լի աշեկոծութեան մը բռնուելով , ուղեցյան-  
դուգն ձեռնարկով մ'աղատիլ այս վտանգէն ,  
այն է կոտրտել սառոյցէ գաշտերը և նոյտ  
ետև ապաստանիլ փոթորկէն : Այսպէս յա-  
ջողեցաւ նա անվտանգ Արիցպերկ համնիլ :  
Եկկորդ ճանապարհորդութիւնն ըրաւ Ֆր-  
անքին 1820ին Հիւսիսային Ամերիկայի ե-  
ղերքները , բայց մշտակաց սառոյցներուն  
պատճեաւ նա չկրցաւ նաւ մանել , ուստի  
և որոշեց հետաղօտել եզերքները յամագլին  
ճանապարհաւ : Այսպէս քանի մ'Անդգիաց-  
ւոց և խումբ մը վայրենի Հնդիկներու հետ

որոշեց նա հասնիլ իւր առաջարկոծ նպառ.  
կին : Այս ճանապարհորդութիւն տևեց եր-  
կու տարի : Ամառը սոքա նաւով կը ճանա-  
պարհորդէին , իսկ ձմեռն ոտքով և նաւը ե-  
տեւնուն կը քաշէին : Երկրորդ ձմբան մէջ ,  
ուտելեաց պակասութեան պատճառաւ , սո-  
վու ամեն տառապանք քաշեցին : Երկու ամ-  
սոյ չափ ստիպեալ եին մնանիլ փտած կա-  
շիներով և ոսկրներով , սրոնց գայլերն ան-  
դամ չէին մօտենար : Այսպիսի բազմատե-  
սակ զրկմանց հակառակ , Ֆրանքլին գոհ  
դարձաւ Անգլիա՝ հետազոտելով զրեթէ ամ-  
րողջ հիւսիսային Ամերիկայի եղերքները :

Այս ամեն ձախորդութիւնք արդելք չ-  
զան Ֆրանքլինի կրկին ճանապարհորդութեան  
ձեռնարկելու և Ամերիկայի հիւսիսային ե-  
ղերքէն ճանապարհ գտնելու Աղլանտեսն  
Ովկիանոսէն Մեծ Ովկիանոսը : 1845 թուա-  
կանին մայիսի 21ին Ֆրանքլին Լոնտոնէն ճա-  
նապարհ ելաւ երկու նաւով իւր հետ առ-  
նելով 440 մարդ և երեք տարուան համար  
ովաշար : Յունիս ամսոյ 12ին հասաւ նա Պա-  
ֆինեան ծոցը և այս տեղէ իրեն նկատմամբ  
վերջին լուրը տուաւ Եւրոպիոյ : Այսուհետե-  
անցան երեք տարի և Ֆրանքլին չը դարձաւ :  
Արդեօք սառոյցներու տակ ջարդ ու փշո՞ւր  
եղած եին նորա նաւերը , կամ ալիքները

խորտակա՞ծ եին դանոնք և կամ արդեօք որ  
և է անապատ կղզի մ" ինկած օգնութէա՞ն  
կ'սպասէին . ոչինչ էր յարտնի : Ահա ինչպիսի  
կառկածներ կ'ընէին Եւրոպացիք դժբաղզ  
Ֆլունքլինի համար : Ադի դարուս պատիւ-  
մ"է որ ոչ միայն Անգլիացիք , այլև Ֆրան-  
սացիք և Հիւսիսային Ամերիկացիք նաւեր  
զրկեցին Ֆրանքլինի հետքը գտնելու համար:  
Նոքա կարողացան մի քա՞նի տեղեկութիւններ  
ժաղովել այդ նշանաւոր ճանապարհորդի վը-  
րայ : Այսպէս , 1850 թուականին , մի քանի  
Սաքիմացիք Վիեխամ կղզւոյ հիւսիսային մա-  
սին մէջ տեսեր են քառասուն սպիտակ մար-  
դիկ որք պատմեր են թէ իւրեանց նաւեր  
սառոյցներէ խորտակուեր են , և կ'երթան  
կղզւոյն միւս կողմը , ուր կը յուսան եղջերու  
որսալ : Վերջերը , միենոյն տարին , Եւրոպա-  
ցիք երեսուն դիակ գտան նոյն ցամաքի վը-  
րայ և ուրիշ հինգ դիակ մօտակայ կղզւոյ մը  
վրայ : Դիակներէն մի քանին ծածկուած էին  
հողով , և միւսներն սոցա մօտ ինկած էին  
զանազան դիրքերով : Կղզւոյն վերայ մեռած-  
ներէն մին կ'երեւար որ սպայ մէր , որով-  
հետեւ նորա ուսէն կախուած էին մի դիտակ  
և մի երկփողեայ հրացան : Նոյնպէս մէկ Սա-  
քիմացիէ կարողացան ձեռք բերել Ֆրանքլի-  
նի ժամացոյցը , ծովային կողմէացոյցը , ար-

ծաթեայ դրդաներ , պատառաքաղ և ուրիշ բաներ : Ասոնք բոլորովին կը հաստատէին Ֆրանքինի ողբալի վախճանը : Բայց ի՞նչ եղած էր ինքն Փանքին , ցարդ ոչինչ յայտնուած է այս մասին : Միայն գտան իւր ձըմեռնային բնակարանը Թէի հրուանդանի վըրայ : Այս տեղ գտնուեցան կործանեալ հիւզեր , երեք գերեզման , պարտիզակ մը , ուր ածուներու մէջ տնկուած էին մամուռ , որդին , և պուտ (կէլինչ + վէճ) :

Հիւսիսային Սառուցեալ Ովկիանոսը կր շօշափէ աշխարհիս երեք մասանց , արսինքն Եւրոպիոյ , Ասիոյ և Ամերիկայի եղերքները , ուր զանազան վայրենի և թափառող ժողովուրդներ , ինչպէս Լափինացիք , Սամցիաներ և Եսկիմացիք , ո՛չ միայն կ'ապրին , այլ և Եւրոպիոյ եղերաց հետ բաւական բանուկ վաճառականութիւն կ'ընեն :

Հիւսիսային Ովկիանոսէն կը ձեւանայ Եւրոպիոյ եղերաց վրայ Առերակ ծովը , Ամերիկայի եղերաց վրայ՝ Պաֆինեա ծոցը և Գերմանիան նեղուցը , իսկ Ասիոյ եղերքը՝ Կորինթոս ծովը :

2. Հարաւային Սառուցեալ Ովկիանոսի մէջ առաջին անգամ ճանապարհորդեց նշանաւոր Անգղիացի ծովագնաց Կուք : Սա Եւրոպիոյ մէջ տարածեց այն դաղափարը թէ հարա-

ւային բեւեռին վրայ ցամաք երկիր կայ , բայց անկարելի է , կ'ըսէր , այն տեղ համիլ սաստիկ ցրտի , ալեկոծութեանց , մառախուցի և մեծամեծ սառույցներու պատճառաւ : Հակառակ այս առաջկութեանց , Հարաւային Ովկիանոսը քաշեց իլեն Կուքի առաջարկեալ երկիրը գտնելու տեհնչն բռնուած շատ մը յանդուգն ծովագնացներ :

Այս ճամբրոգութեան ձեռնարկովներէն առաջիններն եղան Ռուսք , Բէլլինս Հառուզէ . նի առաջնորդութեամբ , մեր ժամանակէն 73 տարի առաջ : Բէլլինս Հառուզէն Սանտուիչեան կզզեաց խումբերէն սղոսկելով հասաւ ցամաք մ' որ ծածկուած էր ձիւնով և սառույցով , և անուանեց զայն Աղեքսանդրեան եղերք . վերջը գտաւ կզզի մը զոր անուանեց Պետրոս Ա. :

Անգղիացիք , Ֆրանսացիք և Հիւսիսային Ամերիկացիք ևս ըրին հետազօտական խուզարկութիւններ Հարաւային Սառուցեալ Ովկիանոսի մէջ , բայց ոչ ոք կրցաւ այնչափ մօտենալ հարաւային բևեռին , որչափ Անգղիացի նաւագետ Դժէմս Թօոսս որ 1844ին գտաւ Վիքթօրիայի ափունքը : Դառնալով ափանց մօտէն գէպ հարաւ , հեռուն տեսաւ բարձր լեռ , որոյ բարձրութիւնը ծովու երեսէն Կ ուկէս մզոն էր և որ դուրս կը ցայ-

տեցնէր ծուխ և բոց : Այս ևս կասկած չէր մնացած որ գանուած կամ երեցած սառուցի խումբերն հաստատուն ցամաք երկրի ափունքն էին :

3. ՄԵՇ ՈՒՅԻՆՆԸ յայտնի եղաւ Եւրոպացւոց՝ Սպանիայ Կարոլոս Ե. թագաւորի օրով : Սա Մակելլանի հրամանատարութեամբ ուղարկեց նաւորդներ , որ պաշտօն ունէին ջրառոյին ճանապարհ գանել Ս.գլանտեան Ոլկիանոսէն ՄԵՇ Ոլկիանոս անցնելու համար : Մագելլան փառաւորապէս կատարեց յանձրն առած պարտաւորութիւնը : Սա ոչ միայն երկու Ոլկիանոսները միայնող ջրանցքը դժու , այլ արեւմտեան ուղղութեամբ նաւարկեց ամբողջ Ոլկիանոսը : Այդ ժամանակէ սկսեալ միշտ կը ճանապարհորդէին ՄԵՇ Ոլկիանոսի մէջ : 1853 թուականէն հաստատուեցաւ մըշտական շոգենաւուց երթեւեկութիւնը Բանամյի և Վիտնէի միջեւ : Այս Ոլկիանոս երեք անուամբ կը յիշուի : Նախ Մակելլան զայն անուանեց Խոշոշէն Ույիննո , երբ անցաւ ալեկոծեալ Մակելլանի ջրանցքէն և մտաւ խաղաղ Ոլկիանոսը : Եւրոպացիք կը կոչեն զայն Ս.ցեւելքու , որովհետեւ հին աշխարհի , Ա.սիոյ , արևելեան կողմը կը դանուի : Իսկ ՄԵՇ անունը , որ ամենայարմարն է , դրուած է , որովհետեւ իւր մեծութեամբը նա հաւա-

սար է ամբողջ երկրագնդիս մակերևութին մէկ երրորդ մասին , ուրեմն և կը հաւասարի մնացեալ Ոլկիանոսներու , ինչպէս և բոլոր ցամաքներու , ամբողջութեանը :

ՄԵՇ Ոլկիանոսը ծոցաձեւ է և սահմանափակուած մէկ կողմէն Ս.մերիկայի եղերաց և միւս կողմերէն Ա.սիոյ և Ա.ւատրաչիոյ եղերաց մէջտեղ : Այս ծոցը Հիւսիսային կողմը կը նեղնայ և կը միանայ Հիւսիսային Ոլկիանոսի հետ Պէհրինկեան ջրանցքով , որոյ րայնութիւնը 105 մղոնէ աւելի չէ . ընդհակառակին , հարաւէն հետզհետէ կը լայննայ կը տարածուի այնչափ որ լայնութեան չափը կը համնի մինչ 15,000 մղոնի : Հարաւային Ս.րեւմտեան կողմէն Մալակայի ջրանցքով ՄԵՇ Ոլկիանոսը կը միանայ Հնդկական Ոլկիանոսի հետ . Հարաւային Ս.րեւելեան կողմէն Մակելլանի ջրանցքով կը միանայ Ս.գլանտեան Ոլկիանոսի հետ , իսկ բուն հարաւային կողմը կը խառնուի Հարաւային Սառուցեալ Ոլկիանոսի մէջ :

ՄԵՇ Ոլկիանոսի վերայ նշանաւոր բնական երեւոյթներէ են Հասարակածային հոսանքը , տարեւոր հողմերը և եղերքներուն վերայ հրաբուխները : Որովհետեւ այս Ոլկիանոսի վերայ ըլկայ ոչ մեծ կզղի և ոչ ցամաք որ կարողանային բեկանել նորա ալիք-

ները , այդ պատճառաւ չասարակածային հոսանքը բոլոր իւր լայնութեամբը կ'ընթառայ անընդհատ և միշտ հոսելով Ամերիկեան եղերքէն դէպ ի Ասիոյ եղերքը : Նոյն ուղղութեամբ ամբողջ տարին կը փչէ միեւնոյն քամին որ և կ'անումնի տարեւոր : Հասարակածային հոսանքը և տարեւոր հողմերն շատ կ'արագացնեն Ամերիկայէն Աւստրալիա դրացող նաւերու ընթացքը :

Մեծ Ոլիկանոսի եղերքները տաշրեր են իրարմէ երևոյթով : Ամերիկեան եղերքները բարձրադիր են , որովհետև նոյն իսկ եղերքին մօտ կ'սկսին բարձրանալ Կորդիլերեան բարձր լեռները , իսկ ընդհակառակն Ասիական եղերքներն աւելի ցած են և մանուածապատ կը ձեւացնեն շատ մը ծոցեր և կըզդեաց խումբեր : Ամերիկեան եղերքը Մեծ Ովկիանոսի մէջ կը ձեւացնէ մի նշանաւոր թերակղզի , այս է Գուաչունէան . իսկ Ոլիկանոսը կը ձեւացնէ միայն Գուաչունէոյ ժողու : Ասիական եղերքի վրայ չկայ և ոչ մի նշանաւոր կղզի , բայց այդ եղերքն Ոլիկանոսի մէջ կը ձեւացնեն չորս թերակղզիներ . Քոհանիտ , Քուէտա , Հնդկան աշխարհներ երեւու և Մալաչո , որոց պատճառաւ Ովկիանոսը դէպ ի ցամաքը կը խրուի մեծ մեծ ծոցեր և ծովեր ձեւացնելով ինչպէս Պէհնէնէայ , Օիօցէ , Ճաբան , Դաբան :

ծովերն , Թօնէինէ և Աէտէ ծոցերը : Ովկիանոսի այս մասանց մէջ կը գտնուին շատ մը կզգեաց խումբեր , Քոսէւէսան , Ճաբանէան , Փէլփէտան և Անգու Հարաւային մասին մէջ ևս կան շատ մի կըզդեպիներ որ կը շրջապատեն Աւստրալիոյ ցամաքը , ինչպէս Մարկոս , Գորուլինէան , Նոր-Կուէնէան , Վանդաբէտէան երէւ , Նոր-Զէւէնար , Ընկերութէան իշխէ , Բաբէկումոց հրդէ , Լոյն :

4. Հնդկան Ովկիանոսը ծանօթ էր Փինկիեցուց Քրիստոսէ հազար տարի յառաջ : Նոցանաւերը կը ճանապարհորդէին Կարմիր ծռվու մէջ և Զինական Ոլիկանոսէն անցնելով կ'երթային մի հարուստ երկիր (Օփիր) : Այս տեղ Փինկիեցիք կը լեցնէին իւրեանց նաւերովիով , արծաթով , թանկագին քարերով , փղոսկրով , Սանտալինի փայտով , կապիկներով և թութակներով . ՚ի դարձին կը մօտենային Սուէիչի պարանոցին (այժմ ջրանցք) ուրոյ վրայօք ցամաքային ճանապարհաւ այդ ապրանքներ կը փոխադրէին Միջերկրական ծռվը : Այս կերպիւ Օ՛քէն բերքերը՝ հին աշխարհի ծովերու վրայ նաւերով , իսկ ցամաքներու վրայ գարավանով (ինչ է) ամեն կողմէ կը փոխադրուէին և կը տարածուէին : Այժմ ուր կիյնայ Օփիր , յայտնի չէ , բայց կը կարծուի թէ Հնդկաստանի մի մասն էր որ այդպէս կը կոչուէր հիներէն : Երբ Արաբացիք

նուաճեցին ամբողջ փոքր Ասման և հիւսիսաշին Ափրիկէն , և այսպէս տիրեցին Սուելիչ պարանոցին , արդիլեցին Եւրոպացւոց՝ առաջին սովորական ճանապարհով Հնդկաստան երթեւեկել , որովհետեւ շահասէր Արաբացի վաճառականք չէին ուզեր ուրիշներու հետ բաժանել այն վաստակիները զօր կ'ստանային Հնդկաստանի հետ ըրած առետուրի շնորհիւ : Այս գէպը ստիպեց Եւրոպացիներն ուրիշ ճանապարհ գանել գէպի Հնդկաստան : Ծովագնացներէ ունանք կը խորհէին համնիլ Հնդկաստան՝ նաւարկելով միշտ գէպի հարաւ Ափրիկէի արևմտեան եզերաց մօտէն . այլք ընդ որս և Քոլոմպոս , կըսէին թէ՛ եթէ ընթանան միշտ գէպի Եւրոպիոյ արեւմտեան կողմը , կը համնին նոյնպէս Հնդկաստան : Երկու կողմն ևս ունէր իրաւունք : Պրեթէ միենոյն ժամանեակ Եւրոպայէն ճամբայ եւան երկու ծովագնացներ . մին Սպանիայէն , միւսը Փորթուկալէն . սոքա էին Քուլման և Վանի ու Գան : Առաջնը 1492ին գտաւ արևմտեան կողմը մինչ այն ժամանեակ անյայտ մնացած կողիներ , որ Հնդկաստան լինել կարծուեցան ամենուն կողմանէ . երկրորդ ծովագնացը Եւրոպայէն գէպի հարաւ դնալով և դառնաւ լով Բարեյառաց էլուին , մտաւ Հնդկական Ովկիանոսը և 1498 թուականին հասաւ բուն Հնդկաստան :

Այս կղղիներ զոր Քուլման դտաւ , յայտնուելով որ Ամերիկային կը վերաբերին , կոչուեցան Արևմտեան Հնդկաստան , իսկ Ասիական հարաւալին թերակղղիները՝ Արևելքան Հնդկաստան : Այդ ժամանակէ ի վեր անդադար և միշտ Եւրոպացիք կը ճանապարհորդեն այդ տեղեր : Այժմ գրեթէ ամբողջ Արևելեան Հընդկաստանը Անդղիացւոց իշխանութեան ներքեւէ : Սոքա այս տեղէ կ'արտադրեն բազմատեսակ և հարուստ բերքեր , ինչպէս , բըրբնձ , բամպակ , մետաքս , աֆիօն , կինամումն : Հնդկական ովկիանոսի վրայ է զլիսաւոր անդղիական նաւահանգիստն Կուիան :

Հնդկական Ովկիանոսը ծոցածէ և սահմանաւորուած Ասիոյ հարաւային , Ափրիկէի արեւելեան և Աւստրալիոյ Արևելուեան եզերքներով : Հնդկական Ովկիանոսի եզերքները մանուածապատ են միայն Ասիոյ կողմերը , իսկ ընդհակառակն Ափրիկեան և Աւստրալիոյ եզերքներն ուզիղ են և չեն ձեւացներ ոչինչ նշանաւոր թերակղղի և ծոց : Այսպէս , Ասիական եզերքները կը խրուին գէպի Ովկիանոս երեք մեծ թերակղղի ձեացնելով , որ են Օքաբիան և երկու Հնդկաստանները , իսկ Ովկիանոսը ըստ կարգին ինք ևս կը մտնէ գէպի ցամաքը՝ երեք մեծ ծոցեր կազմելով , զորս կարելի է ներքին ծովեր անուանել իւր-

եանց մեծութեան և ձեւի համար. այս ծոցերըն են Աբոբէջ Նոր կամ Կոբէջ Նուլը, Պոբէկուն և Պիտիւլուն ծոցերը :

Կարմիր ծովը Ովկիանոսի հետ կը միանայ Պաղէշնորեգի նեղուցով, իսկ Պարսկական ծոցը՝ Հերէնուկուն նեղուցով։ Հնդկական Ովկիանոսի մէջ են երկրիս ամենամեծ կղզիներն . Մաստիական, Սփրիկեան եղերաց մօտ, որոցմէ կը բաժնուի Մասնուի նեղուցով։ Սկզն, որ Հնդկաստանէ կը բաժնուի Փարեւուն նեղուցով, և մեծ ու փոքր Սառ կղզեաց խումբերը որ կը գտնուին Հնդկական և Մեծ Ովկիանոսներու մէջ տեղը։ Սանտ կղզիներէն Ասիոյ ամենէն մօտ գտնուողն է Սումարու կղզին որ Մալաքեան նեղուցով կը բաժնուի Հնդկաստանէն։

Հնդկական Ովկիանոսի ամենանշանաւոր երեոյթն է տարեւոր քամին։ Այս քամին տարեւոր կը կոչուի անոր համար որ վեց ամիս շարունակ կը փչէ (սեպտեմբերէն մինչև մարտ) հարաւային արևմտեան կողմէն դէպի հիւսիսային արևելեան կողմ. միւս վեց ամիսը (մարտէն մինչ սեպտեմբեր) հիւսիսային արևելքէն դէպի հարաւային արևմտեան տարեւոր կը փչէ։ Այս պատճառաւ, դէպի Հնդկաստան ճանապարհորդող նաւը պէտք է հանդպի անպատճառ հիւսիսային արևելեան տարեւոր գաղափար, եթէ ոչ ստիպեալ է կանգնել և սպասել յաջողակ քամին։

5. Արևարեւուն Ովկիանոսը ամենէն աւելի հետախուզեալն և ամենէն բանուկն է։ Եւոչ մի Ովկիանոսի վրայ չը դտնուիր այսչափ ընդարձակ և բանուկ վաճառականութիւն։ Առաջ եղերաց վրայ կը բնակին աշխարհիս ամենէն լուսաւորեալ ազդերն և ժողովուրդները։ Այս պարագային նպաստած են Ադլանտեան Ովկիանոսի բնական յատկութիւնները։ Բոլոր ցամաքներու մասերը իւրեանց եղերքներով շատ քիչ կը շօշափեն զայն, բայց այս Ովկիանոսի ամենագլխաւոր յատկութիւնն այն է որ բացի հասարակածային հոսանքէ որ կը հոսէ Կոռէնսչ եղերքէն մինչ հարաւային Սփրիկէի եղերքը, կայ նաև հակառակագարձ հոսանք սկսեալ Նիու Ֆունդլանդին դէպի Ասորեսն կղզիները, Իւլյուս և Նոր Հերէնուն։ Այս կերպիւայ հոսանքը հասարակածային հոսանքի հետ միատեղ շատ կը դիւրացնեն և կը փութացընեն Եւրոպայի յարաբերութիւնը Ամերիկայի հետ։ Ադլանտեան Ովկիանոսի հարաւային մասը որ կը շօշափէ Հարաւային Ամերիկայի արևելեան եղերքները և Ափրիկէի արևմտեան եղերքը, բնաւ մանուածապատ չէ, մինչդեռ հիւսիսային մասը որ կը շօշափէ Հիւսիսային Ամերիկայի արևելեան և հարաւային եղերքները և Եւրոպիոյ արևմտեան և հարաւային եղերքները, կը կազմէ բազմաթիւ

ներքին ծովեր, ծոցեր, թերակղղիներ և կը դ-  
զիներ:

Առևտեան Ուշանսէն կը ձեանան .

1. Պալբէի Ճաշ, Ռուսաստանի, Բրուսիոյ,  
Տանիմարքայի եւ Շուշտի մէջտեղ: Այս ծո-  
վըն ունի երեք մեծ ծոց . Պօրեան, Ֆիւն-  
էան և Ծիստ: Պալթիկ ծովու նշանաւոր կը դ-  
զիներն են Զէլանտ եւ Ֆիօնիա, ընդ իշխա-  
նութեամբ Տանիմարքայի, եւ Կօթլանտ կղղին  
որոյ վերայ շինուած է ամենամնուր բեր և  
Երկու թերակղղիներով, Սկանախնաւեան և  
Խւթլանտ, Պալթիկ ծովը կը բաժնուի Գեր-  
մանական ծովէն և կը միանայ սորա հետ մի-  
այն մի քանի նեղուցով կամ ջրանցքով (Սունդ,  
Քամել-Կամ և Աքակէրրակ):

2. Գերմանիան Ճաշ, 'ի մէջ Շոթլանտեան  
կղղիներու, Մեծն Բոխտանիոյ, Հոլանտայի,  
Դանիոյ և Նորվէկիոյ :

3. Ի վերջոյ կուգայ խումբ կցզեաց որոց  
գլխաւոր մեծերն են, Մեծն Բէրդունիս և Խուլանդ:  
Մեծն Բոխտանիա կղղին կը բաժնուի ցամաքէն  
Լանդէ ջրանցքով և Բար ու Հուն նեղուցով:

4. Ճերտմարէ նեղուցը կը կապէ Ադ-  
լանտեան Ովկիանոսը Միջերկրական ծովու  
հետ, որոյ մէջ կ'երկնան երեք մեծ թերա-  
կղղիք, Բիրէնեան, Ապէնինեան և Պալքան-  
եան, որք կը կազմեն շատ խոր ծոցեր, ինչ-

ովէս, Ագրիականը, Լիոնի ծոցը, և ան-  
Միջերկրական ծովու մէջ կան շատ մը կը դ-  
զիներ . Քողսիքա, որ կը վերաբերի Ֆրան-  
սայւոց, Սարտէնիա և Միկիլիա՝ Խտալայւոց,  
Յոնիական կղղիներ և Յունական Արշիպիղա-  
դոսը: Միջերկրական ծովը Տարտանէլի կամ  
Չանադ—Գալէի նեղուցով կը միանայ Մառ-  
մառա ծովու հետ, որ իւր կարդին Կոստան-  
դընուազուոյ կամ Վոսփորի նեղուցով կը  
միանայ Սև ծովու հետ . այս ծովն ալ Աէրուի  
նեղուցով կը միանայ Աղովու ծովու հետ :

5. Կուրիէնայի ծոցը կը ձեանայ Ակրիկ-  
եան եղերքներուն վրայ :

6. Մեքսիկայի ծոցը սահմանաւորեալ է  
Ֆլորիտա և Եռաքաթան թերակղղիներով, և  
կը միանայ Անդիլեան ծովու հետ, որ կը պա-  
րունակէ մեծ և փոքր Անդիլեան կղղեաց խում-  
բերը : Անդիլեան կղղիներու մէջ (Քուրա,  
Փամայիկ և ուրիշներ) կը բնակին զանազան  
ժողովուրդներ, որոնք այս տեղէն ուրիշ տե-  
ղեր կը փոխադրեն ծխախտ, բամպակ, ուոմ,  
անանաս, և ուրիշ պտուղներ :

7. Ամերիկայի հիւսիսային Արևելեան և  
զերքը երկու թերակղղիներով կը մանէ Ագլանտ-  
եան Ովկիանոսի մէջ: Այս թերակղղիներն են  
Նոր Շուլանդը և Լոպրուոր, որք կը կազմեն եր-  
կու ծոց, Աստիք Լոպրուոր և Հիւսոն :

## 14. ԿԼԻՄԱ

Ամբողջ Երկրագունդս պատած է հար-  
իւր տասն հազար մեթր թանձրութեամբ օդով,  
որով մեքը շունչ կ'առնումք և կ'ապրիմք: Երկ-  
րագնդիս այս օդային կեղեւը կը կոչուի Մը-  
նուշտ: Որ և իցէ մէկ աշխարհի կամ կողման  
միջնոլորտային վիճակը կը կոչուի Աւետ: Կը-  
լիման կախեալ է շատ մի պատճառներէ, առ-  
տեղագիտական և ֆիզիքական: Աստեղագի-  
տական պատճառներն են երկրի մի համե-  
մատական գիրքը հասարակածին նկատմամբ,  
և արեգական գէմ երկրիս գառնայը իւր ա-  
ռանցքի վրայ. Գիզիքական կամ բնական պատ-  
ճառներն են ծովերու մօտակայութիւնն, երկ-  
րի այլ և այլ բարձրութիւնները ծովու երե-  
սէն չափելով. քամիները, հողի յատկութիւնը,  
միջնոլորտային երևոյթները: Վերջապէս մար-  
դը ինքն ևս կարող է փոփոխել իւր երկրի  
կիման: Կիման ոչ միայն կը ներգործէ երե-  
րիս բուսոց և կենդաննեաց վերայ, վասն զի-  
ամեն կիմայի մէջ չեն կարող աճիլ միենայն  
բոյսեր և ապրիլ միենայն կենդանիք, այլ և  
կը տեսնեմք մարդոց կենաց և բնաւորութեանց  
վրայ ըրած մեծ ներգործութիւնը: Այս իսկ  
պատճառաւ լաւ հասկնալու և ուսանելու է  
այն ամեն պատճառները, որոցմէ կախեալ է

կիման, մանաւանդ որ մէկ բառով միայն կը  
յիշատակուի և կ'որոշուի այս ինչ կամ այն ինչ  
երկրի կիման, ըսուելով. ուստի, բոբեխուն, խռու-  
շուք, և այլն:

Երեւ է ու ու հասրուկնեն նկատմամբ: — Երբ  
ուշադրութիւն կը դարձունեմք աստեղագի-  
տական պատճառներու, որ աղդեցութիւն ու-  
նին կիմայի վրայ, պէտք է լաւ միտ դնեմք  
որ արեգական ուղղորդ, ուղղաձիգ և ուղղիչ  
ճառագայթները աւելի կը թափանցին քան  
թէ խոտորնակ ճառագայթները: Այժմ մեզ  
հասկանալի կը լինի թէ ինչու աշխարհի որ  
և է մէկ մասը որքան մօտիկ լինի հասարա-  
կածին, այնքան տաք է նորա կիման, ընդ-  
հակառակն որքան հեռու լինի, այնքան ա-  
ւելի ցուրտ է: Ի հարկէ այն պատճառաւ որ  
հասարակածին մօտ ընկած երկիրները կ'ընկ-  
նին արեգական ուղղաձիգ ճառագայթներու  
տակ, իսկ աւելի հեռու գտնուող երկիրները  
խոտորնակ ճառագայթներու տակ:

Այս հիման վերայ երկրագունդս կը բա-  
ժանուի հինգ կիմայի, սահմանի. Տէս ուստի, Երկու-  
բարեխուն և Երկու շուք: Որպէս զի այս սահ-  
մանները որոշուին, երկրիս վրայ մտածածին  
զիծ կ'ընդունին, իսկ երկրագնդերու վերայ  
խակապէս կը գծեն լրջանակներ, բերեային և  
ուշադրութիւնն զիծեր: Առաջինները կը դա-

տեն բարեխառն դօտիները ցուրտէն, իսկ երկրորդ գիծերը կը զատեն բարեխառն դօտին տաքէն :

Երրորդ դաշտ : — Արդէն գիտեմք թէ երբ երկրոս կը դառնայ իւր առանցքի վերայ, միւնոյն ժամանակ կը դառնայ նաև արեգական շուրջը : Երկրիս իւր առանցքին վերայ դառնալէն յառաջ կուգան գիշեր և ցորեկ (ինչո՞ւ) : Յերեկը տաք կը լինի, իսկ գիշերը ցուրտ . կէս աւուր շատ տւելի տաք քանի թէ սուաւոտեան և երեկոյեան (ինչո՞ւ) : Երկրագընդիս արեգական վերայ դարձած միջոցին և առաջին վեց ամսեակին (մարտ 9 էն մինչ 10 սեպտեմբեր), հիւսիսային բեկոր աստիճանաբար կը խոնարհի գէպ յ'արեգակն, իսկ հարաւայինն նորա հակառակ գիրքը կ'առնու : Միւս վեց ամսուանն մէջ ընդհակառակին հարաւային բեկոր կը խոնարհի գէպ յ'արեւն, իսկ հիւսիսայինը գէպ ՚ի հակառակ կողմը : Այս է պատճառը որ առաջին վեց ամսուանն մէջ հիւսիսային կիսագնդի վերայ տաք է և կը լինի երկու եղանակ Գորուն և Ամառ, մինչդեռ նոյն ժամանակ հարաւայինն կիսագունդի վրայ; կը տիրեն Աշունը և Զեռը : Միւս վեց ամիսներուն մէջ կը շարունակուի հակառակ կերպիւ (ինչպէ՞ս) :

Բայց եթէ երկրիս մի որ և իցէ կողմի

կիման կախեալ լինէր միմիայն աստեղագիտական պատճառներէ, ամեն այն կողմեր որ հաւասար հեռաւորութիւն ունին հասարակածէն, պէտք էր մի և նոյն կիման ունենային, բայց իսկապէս հակառակը կը տեսնեմք : Այս յառաջ կուգայ հետեւեալ ֆիզիզական պատճառներէն, որք մեծ ներգործութիւն ունին կողմանց կիմայի վերայ :

Զեր . — Տաքութեան ներգործութեամբ ջուրը կը շոգիանայ, և Քուրչէնայ : Գոլորշիտցումը տաքութիւնը կը մեղմացնէ և ցուրտը կը չափաւորէ : Այս տեղ սա ևս նկատելի է որ նախ, բաց ՚ի Սառուցեալ Ոլիմանոսներէն, միւս գրեթէ բոլոր ծովերը չեն սառիր, իսկ երկրորդ՝ ցամաքը, որպէս կարծր մարմին, շուտով կը տաքնայ և շուտով կը պաղի քան յուրը, և այս իսկ պատճառաւ այն տեղեր որ աւելի մօտիկ են ծովերու կամ մեծամեծ գետերու, ո՛չ սաստիկ տաք և ո՛չ ցուրտ կը լինի : Երկրի մը կիման, երբ ծովերու աղեցութեան ներքեւ է, կը կոչուի ։ Տեղյին, Տեղը, ընդհակառակը, կիման այն երկիրներու որ յամաքի ներսերն են և չունին մօտերը մեծ գետեր կամ լիճեր, կը կոչուի առ :

Լեռներ և բարձրանին ուղղաց : — Լեռները բաւականին շօշափելի աղեցութիւն կ'ընեն կիմայից վրայ : Այսպէս, նայելով իւրեանց

դիրքին, Նոքա կը պահպանեն այս կամ այն  
երկիրը կամ կողմերը՝ տաք կամ ցուրտ քա-  
միներէ: Իտալիա չէր լիներ այնչափ տաք,  
իսկ հիւսիսային Գերմանիան այնչափ ցուրտ,  
եթէ Եւրոպիոյ հարաւային կողմը չբարձրա-  
նար բարձրագլուխ Ալպեան լեռանց շղթան,  
որ միևնոյն ժամանակ կը պաշտպանէ Իտա-  
լիան ցուրտ քամիներէ և տաք քամիներուն  
արգելք կը լինի Գերմանիա անցնելու: Այլ  
և այլ տեղեաց բարձրութիւնք ունին նոյնպէս  
ազգեցութիւն կլիմայի վերայ, ինչպէս երբ  
բարձրանաք Քորտիլեան կամ Հիմալայա լե-  
ռանց գագաթն, մի քանի օր ճանապարհոր-  
դած միջոցիդ կը նկատես նոյն փոփոխութիւ-  
նը կլիմայի մէջ, ինչ որ պիտի նկատէիր քա-  
նի մի հաղար մղոն տարածութեան մէջ գո-  
տիներէ մինչ հասարակածը, մինչդեռ այդ  
լեռանց ստորոտը կը տիրէ յաւիտենական ա-  
մառը, և միջին մասերուն մէջ տարւոյ չորս  
եղանակները ըստ կարգին կը բոլորին, իսկ  
գագաթան վերայ կը թագաւորէ յաւիտենա-  
կան ձմեռը, չընայելով որ այդ երկու լեռ-  
ները տաք գօտւոյ սահմանաց մէջ կը գըտ-  
նուին:

Դաշտագերին և անդառ: — Աւազախտոն ու  
քարոտ դաշտագետիները՝ արեգակէն ժո-  
ղովուած ջերմութիւնը օդին հաղորդելով ա-

ւելի կը տաքնան, մինչ ճահճային և սեւա-  
հող դաշտագետիները օդին մէջ չոգի կ'ար-  
ձակեն, որով և կը մեղմացնեն և կը պաղե-  
ցընեն այդպիսի տեղերու կլիման, ինչպէս չոր  
և աւազային Սահարայի կլիման շատ աւելի  
տաք է քան ճահճային և գետաշատ Հընդ-  
կաստանը, բայց այդ ճահճներէ շատ ան-  
գամ կը բարձրանան ֆիստակար շողիները, որք  
հետեանք են նոցա մէջ փտած նիւթերու. ճահ-  
ճային տարածութեանց մի քամին ալ ուրիշ  
պատճառներով յայտնի են իրենց գէշ ազդե-  
ցութեամբ մարդոց առողջութեան համար:  
Ոչ պակաս ազդեցութիւն ունին կլիմայի վե-  
րայ նաև անտառները: Անտառաց մէջ խիստ  
քիչ կը թափանցեն արեգական ճառագայթնե-  
րը. այս պատճառաւ այդ տեղ աւելի երկա-  
րատեւ կը մնայ խոնաւութիւնը քան թէ ու-  
րիշ տեղեր: Մեծ և խիտ անտառները կը  
պահպանեն երկիրը այս կամ այն քամիներէ  
իրենց դիրքին համեմատա:

Քամիներ: — Մթնոլորտի մէջ անդադար օդը  
շարժման մէջ է: Այդ շարժումը քամի կամ հով  
կը կոչուի: Քամիները կը կոչուին հորիզոնի այն  
կողմի անուամբ, որ կողմէն որ կը փշեն. զար  
օրինակ, հիւսիսային քամին հիւսիսային կող-  
մէն, հարաւայինը հարաւէն, և այն կը փշեն:  
Քամիներու ոյժը զանազան է: Ամենաթոյլ

կամ հանդարտ քամին կամ զեփեւոը մէկ րոպէի մէջ կը քչէ օրինակի համար փետուրը մինչ 120 քայլ, հասարակ քամին նոյնպէս մէկ րոպէի մէջ կը կտրէ 540 քայլ. մբրիկը 1500 քայլ, իսկ Ուրականը, որ ահազին ծառերն իսկ արմատախիլ կը լինէ, մէկ րոպէի մէջ կը կտրէ 4500 քայլ ճանապարհ :

Քամիները կը լինին ծովային և եզերային, տարեկորը կամ կանոնեակը, շրջանաւոր կամ վեցամսեայ, փոփոխական և հեղձուցիչ:

Ծովեցն և ենթայն ուժներ : — Ծովեցերեայ կողմերը ցարեկը աւելի ցամաքը կը տաքնայ քան թէ ջուրը. այս պատճառաւ ցամաքի վերայ օգը կը լինի աւելի թեթև և կը բարձրանայ գէպ 'ի վեր, և սորա տեղ ծովու երեսէն կը հոսի ցուրտ օգը. գիշերը ընդհակառակին ջուրը աւելի երկայն ժամանակ կը պահէ իւր մէջ ջերմութիւնը քան թէ հողը և այդ պատճառաւ գիշերը հողը շուտով կը բերգէ իւրմէ իւր մէջ եղած տաքութիւնը և ցուրտ օգը կը հոսի գէպ 'ի ծովը : Ուրեմն ծովեղբային աւելերը ցերեկը կը փչէ ծովային քամի ծովէն, իսկ գիշերը կը փչէ եզերային քամի ցամաքէն : Ծովեղային հրաբուխներու ծուխը լուր կը ցուցնէ նոցա ուղղութիւնը, ինչպէս Վեսուվ հրաբուխի ծուխը ցորեկը կը քաշուի գէպ յերկրի ներսը, իսկ գիշերը գէպ 'ի ծովը :

Տուբեռը կոմ կահանեալ, Շրջանաւոր իս վեցամսեայ ուժներ : — Ագանտեան և Խաղաղ Ովկիանոսներու մէջ հասարակածի մօտէն ամբողջ տարին կը փշեն միմիայն տարեւոր քամիները : Նոքա կը փշեն այն ուղղութեամբ՝ ինչ ուղղութեամբ որ կը հոսի հասարակածային հոսանքը, այսինքն հակառակ երկրագընդիս թաւալման: Քողոմազս առաջինը եղաւ որ նկատեց տարեկոր քամին, որ օգնեց նմա աւելի շուտ նաւել Ամերիկա : Իսկ բուն իսկ հասարակածի վրայ կը դժնուի նաւազնացներու համար սարսափելի վտանգաւոր խաղաղ, հանդարա գօտի : Սյատեղ կը տիրէ այնպիսի հանդարտութիւն որ առագաստանաւերը ստիպուած են միենոյն տեղը անշարժ օրերով մնալ: Քոցասարսափը աւելի կը սաստկանայ այն միրիկով ու փոթորիկով որ երեմն յանկարծ խաղաղութեան տեղը կը բունեն :

Հնդկական Ովկիանոսի վերայ կը փշեն շրջանաւոր կամ վեցամսեայ քամիները : Երբ-ջանաւորի ծագումը այսպէս կը պարզուի . հոկտեմբեր ամսէն սկսեալ Ափրիկէի հարաւային մասը սաստիկ կը տաքնայ, որովհեան այդ ժամանակ կ'սկսի այդ տեղ կիդիւ ամառը, մինչեւ Հնդկաստան, որ կը դժնուի հիւսիսային կիսագնդի մասի մէջ, ձմեռ է,

և այդ պատճառաւ իրարմէ յոյժ կը տարբերին այդ երկու կողմանց ջերմ աստիճանները : Այս այս պատճառաւ , Ասիոյ ցուրտ օդը կը հոսի գէպ ՚ի հարաւային Ափրիկէ , և այսպիսով կը ձեւանայ հիւսիսային արևելքան շրջանաւոր քամին . իսկ ընդհակառակին աղբիլն կը փչէ հարաւային արևմտեան շրջանաւորը (ինչո՞ւ) :

Փոփոխական ժամեր : — Փոփոխական և անհաստատ քամիները կը փշեն ցամաքի ներքին կողմերը : Անհաստատութեան պատճառները շատ են . անհաւասարաշափ այլ և այլ տեղեաց տաքանալը , միշտ այլ և այլ քամիներու իրարու հանդիպիլը , և լեռները որք շատ անդամ կը փոխեն հոսանքի ուղղութիւնը և կը զօրեղացնեն քամիի ոյժը :

Տար հեղաշուրջ և ամեներ : — Տաք հեղձուցիչ , վատառողջ քամիներու կարգէն են .

Սահման կամ Սահմանել , որ կը փչէ Սահարայի անապատի մէջ և կը տեւէ քանի մը ամիս : Այս քամին շատ թունաւոր և սպանիչ է . սուրա փչած ժամանակ օդը գարշելի հոտ ունի , տաքութիւնը կը հասնի մինչ 60 աստիճան :

Եամբն , որ հարաւէն կ'անցնի Եգիպտոս , Արարիա և մինչև անդամ Պարսկաստան : Սակայ փշել մարտ ամսէն անդադար մինչև 50 օր : Եամսին իւր հետ կը տանի և մանրկեկ

աւաշ որ կը լեցնէ մարդոց աչքերը և թափանցելով մորթի մէջ վէրքեր կը շնէ :

Այս ամենէն կ'երեւայ որ քամիները ունին շատ մեծ ազդեցութիւն աշխարհներու կիմալի վրայ : Նոքա կը բերեն տաքը և ցուրտը , չոր և անձրևային եղանակը . ոմանք ՚ի դոցանէ գէշ ներգործութիւն կ'ընեն մարդուս առողջութեան վերայ , իսկ ուրիշերը ընդհակառակն : Բայց ՚ի այդ , մարդիկ գիտցեր են օդտուիլ քամիներու ոյժէն : Քամիները ուռեցնելով նաւերու առագաստները՝ մարդիկ կը ճանապարհորդեն հեռու աշխարհները : Քամիով աղօրիքներ կը դարձնեն :

Միաւորային երևոյններ : — Մթնոլորտային երեսովներն են անձրև , ցօղ , եղեամն , ձիւն , կարկուտ :

Մեք միշտ կարող եմք նկատել , որ ջուրէն , երկրէն , բոյսերէն և կենդանիներէ կը բարձրանան գոլրշի , տաքութիւն , և մարմին մը որչափ աւելի տաքցնենք , այնքան աւելի իրմէ գուրս գոլրշի կուտայ օդին մէջ : Այսպէս , գաւաթի մը մէջ պարունակեալ տաք ջուրը աւելի շուտ կը գոլրշանայ քան թէ պաղ ջուրը : Փոքր ճահիճներու նման մեր փողոցներու մէջ կեցած ջուրերն աւելի շուտ կը չորնան , կը գոլրշիանան ամսոը , քան ցուրտ , աշնանային օրերը : Գոլրշիացումը

միշտ օդին մէջ կայ, բայց մեզ տեսանելի չը լինիր միշտ (ինչո՞ւ) : Առեք գաւաթ մը տաք ջուր, մտցուցէք պաղ սենեակի մը մէջ, կը տեսնէք որ գաւաթէն գոլորշի կը բարձրանայ, ուրեմն այս միջոցին գոլորշիացումը տեսանելի է . իսկ եթէ սենեակի օդոյն ջերմաստիճանը միևնոյն լինի գաւաթի ջուրի ջերմաստիճանին հետ, այն ժամանակ անտեսանելի կը մնայ գոլորշիացումը : Այսպէս և ցուրտ եղանակին լաւ տեսանելի է գոլորշիացումը թէ՛ մարդոց և թէ՛ կենդանեաց վրայ, մինչ տաք եղանակին, երբ գոլորշիացումը աւելի սաստիկ է, անտեսանելի կը մնայ : Եւ այսպէս գոլորշի տեսանելիութիւնը կախեալ է մարդոց և զայն շրջապատող օդոյն ջերմաստիճանի տարբերութենէն : Ահա ինչու համար է որ երբ երկրիս մակերեսոյթը ոչ հաւասար կերպիւ կը լինի տաքացած զայն շրջապատող օդոյն հետ, այն ժամանակ գոլորշիացումը տեսանելի կը լինի : Այսպիսի տեսանելի գոլորշիացումը կը կոչուի Տէ՛ : Մէ՛գ երբ ստէպ կը պատահին և իփու կը լինին մամաւորապէս ծովեղերեայ կողմերը, իսկ աւաղային տեղեր գրեթէ ամենեին չեն կազմուիր : Երբ գոլորշին կը բարձրանայ մթնուրտի աւելի վերի խաւը, շերտը և այն տեղ կը խտանայ, այն ժամանակ մեղ կ'երեայ իբր

ամպ : Այս այն պատճառաւ է որ մթնողորտի վերի շերտը աւելի ցուրտ է քան վարինը, ուրեմն գոլորշիացումը, որ անտեսանելի է մեղ երկրի մօտ եղած ժամանակը, տեսանելի կը գառնայ վերը բարձրը : Խսկապէս թէ՛ մէդը և թէ՛ ամպը միևնոյնն են . տարբերութիւնը միայն նորա մէջ է որ երկրէս միևնոյն հեռաւորութեան մէջ չեն : Ամպերը կը սահին երկրէս այլ և այլ բարձրութեամբք : Եթէ ամպի վրայէ, որ կը շողայ օդոյն մէջ, կը փչէ ցուրտ քամի, այն ժամանակ գոլորշին, որմէ կը ձեանան ամպերը, աւելի սերտ կը խտանայ, կը փոխուի ջուրի կաթիլի, և այսպէս ոգէն աւելի ծանրանալով, կընկնի երկրիս վրայ իբր ԱՅՀՆ :

Անձրեւ շատ օդտակար է երկրիս . նա կը պահպանէ բուսականներու կեանքը . Եթէ անձրեւ չըդայ, կը չորնան ասոնք և կը մեռնին : Տաք ամառոնային օրերը անձրեւ կը զովացնէ և կը մաքրէ մթնուրտը . բայց ամեն կողմեր միևնոյն չափու չեն անձրեւեր . կան տեղեր ուր մինչև անգամ ամեննեին անձրեւ չգար : Այսպիսի կողմերը ընդհանրապէս ծովերէ հեռու կը գտնուին . ո՛չ գետ և ո՛չ լիճ ունին, և այդ տեղերու հողը չոր և աւաղուտէ : Մի քանի աշխարհներ քանի մի ամիս անդադար հեղեղանան անձրեւեր կը թափին

և յետոյ քանի մի ամիս կաթիլ մի անձրէ չը գար : Ա.յսպիսի անձրեւներ շրջանառող կը կոչուին : Երջանաւոր անձրեները մեծաւ մասամբ կը իմնին տաք գօտոյ մէջ և այդ պատճառաւ կը կոչուին նաև արևադարձային : Անձրենի վրայ խօսած ատեն , պէտք չէ մոռնալ և Ծիածանը , որ աղեղածե կ'երեւայ եր կընքի վերայ այլ և այլ գոյներով , անձրեւելէ անմիջապէս յետոյ , երբ տակաւին օդը խոնաւէ և հեռուն չէ դադարած անձրեւելէ : Ծիածանը կը ձևանայ արեգական ճառադայթներու անձրենի կաթիլներու մէջ բեկմանէն : Զ'այս կարելի է փորձով տեսնել՝ ջուրով լի շիշ մը դնելով արեգական ճառադայթներու դիմաց . այն ատեն ճառադայթներու բեկրեկմանէն կարելի է շիշոյ վրայ նկատել այլ և այլ հաճելի գոյներ :

Շիշի մը մէջ լեցնեմք պաղ ջուր ամառնային տաք եղանակին և տունէն դուրս օդոյն մէջ դնենք զայն . շիշին դուրսի կողմը խսկոյն ջուրի կաթիլներ կը նկատեմք : Ուսկից երեցան այս կաթիլները . 'ի հարկէ շիշի մէջն ջուրը կարող չէր դուրս թափանձել : Շիշին վրայ նստած կամ փակած կաթիլները ոչ այլ ինչ են եթէ ոչ դուրսի տաք օդոյն գոլորշն որ ջրոյ կաթիլի փոխուեցաւ երբ քսուեցաւ ցուրտ շիշին : Ա.յսպէս , երբ երկ-

րիս մակերեսոյթը օդէն աւելի կը ցրտանայ , ինչպէս գիշերը և մանաւանդ առաւօտուն , պաղած կամ ցրտացած իրերու վրայ գոլորշները կը փակշին իրը ջրոյ կաթիլ , ինչպէս տեսանք շիշի վրայ : Ա.յս է Յուզ : Ա.նան գիշերը հողը այնչափ կը ցրտանայ որ երբ ջրային գոլորշները կը քսուին աւելի ցրտացած իրերու , կը փոխուին այլ ևս ո՛չ կաթիլի , այլ բարակ , ասեղածե , կամ գնտասեղի գլխանման պաղ մի նիւթոյ , որ կը կոչուի Եղեան : Ուրեմն ցօղը և եղեամն միւնոյն են . տարբերութիւնը այլ և այլ աստիճանի տաքութեան մէջ է այն իրերու որոց վերայ նոքա կը նըստին կամ կը քսուին : Եթէ անձրենի կաթիլը դէպ 'ի երկիրս սահած ժամանակ ամպերէն աւելի ցուրտ օդէ անցնի , կը սառի և կ'ընկնի երկրիս երեսը իբր կուտա : Կարկուտը ընդհանրապէս ամառը և ցերեկը կուգայ . մինչեւ աղաւնիի հաւկիթի չափ մեծութիւն կունենայ , շատ վնասներ կը պատճառէ բուսոց և կենդաննեաց : Ա.մերիկայի մէջ կարկուտը երբեմն կ'սպաննէ շատ եղջերուներ և կենդանիներ : Խոկ չնդկաստանի մէջ կարկուտի հարուածները նման են հրացանի հարուածի և կլոր բացուածք կը թողուն պատուհանի ապակիներուն մէջ :

Կան ամպեր որ այնչափ կը բարձրանան

սաստիկ ցուրտ մթնոլորտի մէջ որ ջրային մասունք կը սառին : Եթէ դէպ յ'երկիր սահած միջոցին մթնոլորտի տաք շերտէն անցնին , այն ժամանակ մեղ կը հասնին իրը անձրև , իսկ երբ վարն ալ ցուրտ է , այն ժամանակ այս մթնոլորտային երեղիթը կը տեսնեմք իրը փոքրիկ սպիտակ կը բամպակի կտորի նման որ օդոյն մէջ տարութերուելով , վար կը թափուին և կը ծածկեն երկրիս երեսը : Այս է յենք :

Փորձը հաստատած է որ ձեան տակը տաք է : Հոն անփճանալի կը մնան սերմերը որոնք ցանուած են դաշտերու մէջ , մինչդեռ եթէ ձիւն չգայ և ցուրտ լինի , նոքա կը սառին , կը փճանան : Մարմոց պաղած մասերը եթէ ձիւնով շփենք , կը կազդուրի , իսկ ընդհակառակն եթէ վառարանի կամ կրակարանի մօտ տաքցնել ուզես , բողբոքումն կը պատճառի :

Մարտուս ներդուժունիւնը համ աշխեցունիւնը հետոյն էրոյ : — Յայտնի է թէ ուր որ մարդիկ ընկերութեամբ բնակութիւն հաստատեցին , այն տեղ կիման աւելի տաքցեր է :

Քաղաքի մէջ աւելի տաք է օդը քանթէ գիւղի մէջ . գիւղի մէջ աւելի տաք է քանթէ բաց տեղը : Այս այն պատճառաւ է որ մարդ բնակութեանց և այլ բաներու համար կը

հիմնէ շնուրթիւններ , այգիներ , պարտէզներ կը անկէ , կը սերմանէ , ճահիճները կը չորցընէ , և այսպիսով կը պահպանէ երկիրը դէշ դոլորչիացումէ , կը կոտորէ անտառները և ճանապարհ կը բանայ արեգական ճառագայթներուն , որով կ'ազատէ աշխարհը աւելորդ խնաւութենէ : Կան տեղեր որ երբեմն լաւ կիմա են ունեցեր և շատ բարեբեր են եղած . բայց երբ մարդիկ այլև այլ հարկէ ըստիպեալ թողուցած են այդ տեղերը , անոնք դարձեր են անբարեբեր անապատային տարածութիւններ . այսպէս արևմտեան Ասիան շատ բարեբեր է եղած դարեր առաջ , բայց այժմ մարդոց սակաւութեան պատճառաւ այլափիսուած է :

Լաւ աշխարհագրական քարտէզներու վրայ աշխարհաց կիման մօտաւորապէս նշանակուած է այլև այլ գծերով , որք կը ցուցընեն տարւոյ միջին ջերմաստիճանը և կամ մթնոլորտային երեղիթներու , այսինքն անձրեկի և ձեան բաժանումն : Միջին ջերմաստիճանը այսպէս կ'որոշուի , օրուան մէջ քանի մի անգամ կը դիտեն ջերմաչափը , ինչ թիւեր որ գտնեն , ամենը միատեղ կը գումարեն և յետոյ ստացուած գումարը կը բաժնեն այն թըրով որ կը ցուցնէ թէ օրուան մէջ քանի անգամ դիտուած է ջերմաչափը : Այսպէս կը

գտնուի օրուան միջին ջերմաստիճանը : Խոկ ամս սուան միջին ջերմաստիճանը որոշելու համար կը բաժնեն ամբողջ ամսուան մէջ դիտած և դտնուած թիւերուն գումարը 30 ով, տարւոյ միջին ջերմաստիճանը գտնելու համար ամսական դիտածներու գումարը կը բաժնեն 42 ով : Վերջապէս այս կերպիւ կարելի է նաև խմանալ 10 տարւոյ միջին ջերմաստիճանը : Կիմայի այս կերպ որոշումը կը լինէր ամենաճշգրտ , եթէ կարելի լինէր գտնել երկրագընտիս ամէն կէտերու , ամէն կողմերու 10 տարւոյ միջին ջերմաստիճանը . բայց սորա համար հարկաւոր է շատ ժամանակ , զիտութիւն , և համբերութիւն , զոր պէտք է սպասել կատարեալ լուսաւորեալ ժողովուրդներէ : Աշխարհացոյցներու վրայ կը գծեն նաև երկու դիմ , մէկը կը ցուցնէ ձմրան միջին ջերմաստիճանը , իսկ երկրորդը՝ ամսուան միջին ջերմաստիճանը :

Այսպէս , աշխարհացոյցի վրայ գժուար է նշանակել երկրագնտիս մթնոլորտային երեսիմներու ճիշտ բաժանումը : Աւելի կամ պակաս ճշտութեամբ նշանակուած են անձրեկի և ձեան բաժանումն հիւսիսային կիսագունտի վրայ , և այդ պատճառաւ կարելի է աշխարհացոյցներու վրայ նկատել հետեւեալ չորս գօտիները :

1. Անցանային անցելային գօտի : — Այս գօտւոյ տակ են այն կողմերը որ լնկած են հասարակածէն դէպ ՚ի հիւսիս , այն է միջին Ափրիկէ , հարաւային Ասիա , այսինքն երկու չնդկաստանները , Ովկիանիս և Հարաւային Ամերիկայի հիւսիսային մասը : Մեր ամառնային եղանակին այս տեղեր անդադար կը թափին շրջանաւոր անձրեները :

2. Անցելային գօտին տակ են հիւսիսային Ափրիկէն (Ահրա, Եգիպտոս, Սուրիա, Նուպիա) , քանի մի կողմեր միջին Ասիոյ (Արաբիոյ, Սիւրիոյ , Պարսկաստանի, Թաթարիստանի) : Այս գօտւոյ տակ ամբողջ տարին չը լինիր անձրե , և հազիւ երբէք կը պատահի այն : Նկատուած է որ վերին Եգիպտոսի մէջ ութ տարուան մէջ երկու անդամ անձրեներ է :

3. Զերանային անցելային գօտի : — Այս տեղ կը լնկնին Ափրիկէի հիւսիսային ծովու եղերքները , հարաւային Եւրոպան , (Սպանիա , Իտալիա , Յունաստան , Թուրքիա) , միջին Ասիոյ մի քանի մասերը (Ասիական Թուրքիա , Չինաստան) և միջին Ամերիկա , արևեմտեան չնդկաստանի հետ : Այս տեղ ամսուր գրեթէ ամենեւին չ'անձրեներ , իսկ ընդհակառակը ձմեռը օր չ'անցնիր որ չ'անձրեէ : Զիւնը բայցառութիւն է :

4. Փոքրիական երեւայիներու գօտի : — Սորա

տակը կ'ընկնին ամբողջ միջին և հիւսիսային Եւրոպան, հիւսիսային Ասիան և հիւսիսային Ամերիկա : Այս գոտոյ մէջ փոփոխակի կը թափին անձրև և ձիւն :

## 15. ՄԱՐԴ

Երկրագնտիս վրայ բնակող բոլոր մարդիկ, միասին մարդկային սերունդն կը կազմեն և սերած են մէկ զոյտէ (օր): Մարդ կարող է ամեն կլիմայի, եղանակի մէջ ապրիլ, ոչ սակայն ինչպէս անասունք և բոյսեր: Նախնական էակ ՚մի լինելով, կարող է զինքը տաքէ և ցուրտէ պահպանել, և ամեն տեղ գըտնել միջոց իւր ապրուստը, սնունդը հօգալու համար: Մարդիկ իրարմէ կը զանազանուին արտաքին նշաններով, մասնաւորապէս մորթի դոյնով, գանկի կաղմուածքով, լեզով, կենցաղալարութեամբ և կրօնիւ:

Արտաքին տեսլեամբ մարդիկ հինգ դասակարգի կամ ցեղերու բաժնուած են. Կովկասն, Մակովսն, Ենովյեան, Անդրէվսն և Մալտեան:

1. Կ.Վ.Հայութն ցեղն ունի սպիտակ մորթ, կը ձուածե գլուխ, երկայն ու փափուկ մազեր, խիտ մօրուք, մեծ աչքեր և միջակ հա-

սակ : Շատ հին ժամանակէ ՚ի վեր կը բնակին Ս.Ռեմուեան Ա.սիոյ (Հայք), Եւրոպիոյ և հիւսիսային Ա.փրիկէի մէջ : Իսկ վերջերս սկսած են բնակիլ Ա.մերիկայի, Ա.ւստրալիոյ մէջ (ի՞նչ ժամանակէ ՚ի վեր):

Ա.մենախելացի և քաղաքակիրթ ժողովուրդները կովկասեան ցեղին կը պատկանին: Նոքա գտան նոր նոր երկիրներ է ժողովուրդներ, և ամենուրեք կը տարածեն քաղաքակրթութիւնը, լուսաւորութիւնը և քրիստոնէական կրօնը :



ԿՈՎԿԱՍԵԱՆ



ՄՈԽԿՈՎԵԱՆ

2. Մակովսն ցեղը յայտնի է իւր մութդեղնագոյն մորթով, քառանկիւնի գանկով, լայն երեսով, նեղ նաւակաձե աչերով, գըլխու ցանցառ մազերով և մօրուքով. ունի միջնէ հասակ, երկայն մարմին փոքր ուսներու վրայ: Ա.ս ամենաբազմաթիւ ցեղն է և կը

բնակի ամբողջ Ասիոյ մէջ (ո՞ւր) և մասամբ  
Եւրոպիոյ հիւսիսային կողմեր : Այս ցեղի մէջ  
և կան մի քանի լուսաւորեալ ժողովուրդ-  
ներ, ինչպէս Զինացիք և Ճարոնացիք :



ԱՄԵՐԻԿԵԱՆ



ԵԹՈՎ.ՊԵԱՆ

3. ԵՇԱՀԵԱՆ էաճ Խոհեմի ցեղը կը ճանչցուի  
իւր սե գոյնով տափարակ ծործորակով բուր-  
դի նման գոռուզ մազերով, ուռած շրմներով,  
ուժեղ կաղմուած քով ու բարձր հասակաւ :  
Հին ժամանակները խափակները միայն հա-  
րաւային Ա.փրիկէի մէջ կը բնակէին . բայց Ա-  
մերիկայի գտնուելէն յեւոյ անոնցմէ շատե-  
րըն ան տեղ գաղթեցին :

4. Ա.ԱՌԵԿԵԱՆ ցեղը կը զանազանուի իւր պը-  
ղնձակարմիր գոյնով, նեղ երեսով և ներս  
խրուած գանգով . կը բնակին դվիստորապէս  
Ա.մերիկայի անապատներու և անտառներու  
մէջ :

5. Մ.Ա.Լ.Ե.Ե.ԱՆ ցեղն ունի գեղին գոյն, վերի  
կողմը գուրս ցցուած գանգ ; լայն և տափա-  
րակ քիթ ու մեծ բերան : Կը բնակի մեծ և  
չնգկական Ովկիանոսաց կղզիներու մէջ : Այս  
ցեղի ժողովուրդք շատ սիրով կ'ընդունին Եւ-  
րոպական բարքն ու սովորութիւնները, ինչ-  
պէս նաև քրիստոնէական կրօնը :



ՄԱԼ.Ա.Ե.Ա.Ն

Իւրաքանչիւր ցեղ առանձինն կը բաժ-  
նուին շատ մի ժողովուրդներու, ինչպէս,  
Կովկասեան ցեղին կը վերաբերին Հայերը,  
Ֆրանսացիք, Գերմանացիք, Իտալացիք,  
Բուլաք, Անդլիացիք, և այլն :

Կան ժողովուրդներ, որոնք թափառիկ  
կեանք կը վարեն, կան ևս որ հաստատուն  
բնակարաններ ունին :

Վայրենի մարդիկ չունին ոչ սեպհակա-  
նութիւն, ոչ լաւ բնակարաններ . կը սնանին  
պատահական որսերով, և կը բնակին հո-

իրճիթներու և այլերու մէջ կամ ժառոց ճիւղերու վրայ . ոմանք մինչև իսկ կը խրուխն աւազի մէջ : Այսպիսի վայրենիներու կարելի է հանդիպիլ Ա.փրիկէի և Ա.ւստրալիոյ մէջ խափչի ցեղէն , իսկ Ամերիկայի մէջ կարմը- րամորթերէն : Վայրենեաց մէջ կան մինչև իսկ մարդակերներ :

Թափառիկ ժողովուրդները ունին շատ մի հօտեր , որոնց հետ տեղէ տեղ կը թափա- ռին լաւ արօտատեղիներ գտնելու համար . բնակութեան համար կը շինեն բրդէ և կա- շիէ ժամանակաւոր վրաններ : Թափառիկը մի քանի արհեստներ ևս գիտեն . ինչպէս , դարր- նութիւն , դանակագործութիւն , և կ'ընեն առևտուր փոխանակութեամբ (ի՞նչ է) :

Մշտակեաց ժողովուրդ.ք , որոնք գիւղե- րու և քաղաքներու մէջ կը բնակին , կը ձե- ւացնեն տէրութիւն , ուր իւրաքանչիւր մար- դու ինչքն ու կեանքը օրինօք պահպանուած են : Մշտակեաց ժողովուրդ.ք կ'զբաղին բաղ- մատեսակ ճարտարուեստներով (ի՞նչ է) : Նոքա կը մշակեն այլազան օգտակար բոյսեր (երկրագործութիւն) , կը պահեն ընտանեկան կենդանիներ որոնց համար կը շինեն գիտաց- կուն բնակարաններ (տաւարաբուծութիւն) , եռներէ կը հանեն զանազան մետաղներ և հանքեր (հանքագործութիւն) , բնական բեր-

քերէ գործարաններու մէջ կը շինեն կամ կը դործեն արուեստական պիտոյքներ (բազմա- զան ճարտարուեստութիւն) և կ'ընեն առևտուր ներքին և արտաքին գրացի ժողովրդոց հետ- բաց 'ի սոցանէ , իրենց միտքն ու սիրտը կը թ- թելու համար կը պարապին գիտութեամբք և արուեստներով : Ահա այս պատճառուաւ սոքա կը կոչուին լուսաւորեալ և քաղաքակրթեալ ժողովուրդներ :

Ամենալուսաւորեալ և քաղաքակրթեալ ժողովուրդները Եւրոպիոյ մէջ կը բնակին . նոքա մեծաւ մասամբ քրիստոնեայ են : Այս կրօնը , զոր մեղ տուած է մեղ Փրկիչը Յի- սուս Քրիստոս , կ'ուսուցանէ մեղ հաւատալ միակ և ճշմարիտ Աստուծոյ որ արարիչն է տիեզերքի , և սիրել մեր ընկերը մեր անձին պէս :

Մահմետականք և Հրէայք նոյնպէս կը հաւատան միակ Աստուծոյ , բայց կան և ժո- ղովուրդներ , որոնք կը ոկաչտեն շատ մի աստ- ուածներ : Այսպիսիք կը կոչուին կռապաշտ (ի՞նչ է) : Բայց երկրագնտիս վրայ ցարդ չը դանուեցաւ ժողովուրդ մի , և ո՛չ իսկ վայրե- նի , որ չունենար որ և իցէ մի կրօն :



Աշխարհական բառեր դասագիրքը մեք  
պատրաստած էինք բոլորվին այլ եղանա-  
կաւ, բայց ամենուն յայտնի և մեզմէ ան-  
կախ պատճառաւ անկարելի էր մեզ հրատա-  
րակել զայն . առայժմ ստիպեալ պիտի սպա-  
սեմք նոյնը հրատարակելու համար աւելի բա-  
րեյաջող ժամանակի : Այժմ կը հրատարա-  
կեմք առաջին տարւոյ համար ներկայ աշ-  
խարհագրութեան դասագիրքը որ բոլորվին  
հետեւութիւն է Սէմէնօվի դասագրքին : Ա-  
մեն ուսուցիչ երբ ձեռքը առնէ զայն և մի-  
անգամայն ուշի ուշով աչքէ անցնէ , պիտի  
շուտով ըմբռնէ թէ իւր դասագրքի նպատա-  
կըն ուր է , և ի՞նչ հիմ կ'ուղէ դնել : Պէտք  
է դիտնալ որ աշխարհագրութիւնը գիտու-  
թիւն է : Այս դասագիրքը , մանաւանդ ա-  
ռաջին տարւոյ առաջին մասը , փոքրերու հա-  
մար է . և որովհետեւ ուսումնարանի մը բար-  
ձըր կարգերու մէջ ուսանելի նիւթը նպատա-  
կըն է , իսկ ընդհակառակը ստորին կարգե-  
րու մէջ նիւթը ընդհանուր կրթութեան հա-  
մար է , ուստի աշակերտի զարգացման առ-  
տիճանի համեմատ յառաջ դնալու է , այն է  
իւր բնակած քաղքէ , մինչև անդամ՝ իւր կե-  
ցած տեղէ սկսելու է ուսումը և առաջ գը-  
նալու է : Ամեն ուսուցիչ միշտ սա սկզբանքը  
ի միտի ունենալու է որ պէտք չէ շտապաւ  
առաջ գնալ , այլ ծանր և հասաւատ , և քա-  
նի յառաջ գնայ աշակերտը , միշտ կրկնելու  
է անցեալ դասերը :

7263

00003368

2013

ՀՀ Ազգային գրադարան



NL0003368

## Հ Ր Ա Տ Ա Բ Ա Կ Ե Լ Ի

ՄԱՆԿՈՎԱՆ ԵՐԳԱՐՈՒՆ , ԵՎՐՈՊԱԿԱՆ  
ՃԱՋԲԱՆԻՉԵՐՈՎ : Աշխատասիրուրիւն կ. Ա.  
Ազգանդարեանցի :

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԵԱՆ ԴԱՄԵՐ , ԵՐԿՐՈՐԴ  
ՄԱՐԻ :

ԿԵՂԲԱՆԱՏԵԴԻԲ և ԽԻՋԱՆՈՒ ԱԽՏԱՄԲԱՍԻ-  
ՔԱՋ ԸՆԿԵՐՈՒՔԵԱՆ ԳՐԱԿԵՆԵԱԿԸ, Կ. ԱՅՈՒԽԱ,  
ՄԵՐՃԱՆ , ԳՐԱՊՐԵ-ԳՐԱՄԲՈՒ ԽԱՆ , թիւ 4 :

---

معارف نظارات جليلة سنك رخصتيه طبع او نمشدر  
عدد ٤٢٧٥ سنة ٣٠٠ شوال ١٩٩٩ غستوس